Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊՕԶԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

# ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ

355
Ռ-24

ՊԵՏՀՐԱՏ — ՌԱԶՄՀՐԱՏԲԺԱԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1932

1 MAR 2010

ՊԱՇԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

355
Դ-24

620
38

# ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ
# ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ

(Պաշը-Ավիաքիմի կանանց համամիութենական 1-ին խորհրդակցության որոշումները)

ԹԱՐԳ. ԳՐԱԲԻՈՍ

ՊԵՏՀՐԱՏ . 1932 ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека

18 JUL 2013
40466

Շրջաբերական № 58
29/XII 1931 թ.

## ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԲՈԼՈՐ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ

Պաջը-Ավիաքիմի 1-ին համամիութենական կանանց խորհրդակցության վորոշումների մշակման և իրացման մասին:

Պաջը-Ավիաքիմի 1-ին համամիութենական կանանց խորհրդակցության վորոշումները հսկայական նշանակություն ունեն նոր պայմանների ու պարագայի պահանջների համեմատ վերակառուցելու համար Ընկերության այն աշխատանքները, վոր տարվում են աշխատավոր կանանց հետ:

Կենտ. խորհուրդն առաջարկում է տանել ըստ այն վորոշումների մասսայականացման ուղղությամբ: Կամպանիայի հիմնական խնդիրներն են լինելու՝

1. Մոբիլիզացիայի յենթարկել աշխատավոր կանանց ուշադրությունն ու ակտիվությունը իմպերիալիստների կողմից ԽՍՀՄ դեմ զինված հարձակման սպառնալիքի խիստ աճման (պրովոկացիոն հարձակումները Խորհրդային Միության դեմ. կապված Մանջուրիայում տեղի ունեցող անցքերի հետ և այլն) և յերկրի պաշտպանության խնդիրների շուրջը:

2. Պարզաբանել աշխատավոր կանանց լայն խավերին սոց. շինարարության, ինդուստրացման, յերկրի ավիացման ու քիմիացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման նշանակությունը յերկրի պաշտպանության ամրացման գործում, կազմակերպելով նրանց՝ պայքարելու ընկ. Ստալինի պատմական 6 պայմանների լիակատար իրացման համար, հնգամյակի վերջին

տարվա առաջին կվարտալի պլանի կատարման ու գերակատարման համար, հաջողությամբ անցկացնելու տրանսպորտի ձմրան փոխադրությունները, կոլտնտեսությունների կազմակերպման-տնտեսական ամրացման, բոլոր մթերումների ավարտման, բոլշևիկյան 3-րդ գարնան պատրաստության և անցկացման համար։

3. Մասսայականացնել Պաջր-Ավիաքիմի ընդհանուր ու հերթական խնդիրները, վերակառուցել կանանց հետ տարվող աշխատանքը համաձայն Պաջր-Ավիաքիմի 1-ին համամիութենական կանանց խորհրդակցության վորոշումների, ծավալել կանանց մեջ ռազմական ուսուցումը և պատրաստել նրանց հակաոդային պաշտպանության, կոնկրետ միջոցներ ձեռք առնել՝ առաջ քաշելու համար լավագույն ակտիվ հարվածային կանանց ղեկավար աշխատանքի համար։

4. Ապահովել Պաջր-Ավիաքիմի աշխատանքի ծավալումն ազգային մարզերի ու ազգային փոքրամասնությունների աշխատավոր կանանց մեջ։

Գործնական միջոցառումների ընդհանուր սիստեմում հատուկ ուշադրություն նվիրել հետևյալի վրա.

ա) Պաջր-Ավիաքիմի անդամ բանվորուհի ու կոլտնտեսուհի կանանց լայն մասնակցությամբ անցկացնել Պաջր-Ավիաքիմի ակտիվի համաքաղաքային ու ռայոնական ժողովներ և Պաջր-Ավիաքիմի բջիջների ժողովներ, դնելով հետևյալ հարցը՝ «Միջազգային դրությունը, ռազմական վտանգն ու աշխատավոր կանանց պատրաստության հերթական խնդիրները յերկրի պաշտպանության նկատմամբ» (Պաջր-Ավիաքիմի համամիութենական 1-ին կանանց խորհրդակցության վորոշումների հիման վրա)։

Առավելագույն չափով պետք է ոգտագործվեն կանանց պատգամավորական ժողովները, մասսայականացնելու համար Պաջր-Ավիաքիմի կանանց 1-ին համամիութենական խորհրդակցության վորոշումները։

բ) Կազմակերպել Պաջր-Ավիաքիմի անվան արտադրական կանանց նոր հարվածային բրիգադներ ձեռնարկություններում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում, կազմակերպել Պաջր-Ավիաքիմի հացի կարմիր դումակներ, ինչպես նաև հարվածային բրիգադներ՝ գյուղում տարածելու համար 3-րդ վճռական տարվա» պետփոխառությունը (Պաջր-Ավիաքիմի հանձն առած պարտավորության կատարման կարգով).

լավագույն ակտիվիստ ու հարվածային կանանց հանձնել կուսակցության։

գ) Ծավալել կանանց ռազմական ուսուցման գործնական կազմակերպությունների ցանց (կապի, ԲԳԿԲ վարչա-տնտեսական աշխատողների, ավտո-տրակտորային մեքենավարների, տեղագրերի, հետախուզության հրաձգային և այլ դասընթացներ ու խմբակներ),

կազմակերպել հակաոդային մասեր ու խմբեր, լայն չափով ընդգրկել կանանց հակաոդային պաշտպանության անդրադիտության վերացման աշխատանքով։

դ) Դեպի Պաջր-Ավիաքիմի շարքերը հավաքագրել աշխատավոր կանանց և առաջին հերթին բանվորուհիներին և կոլխոզուհիներին։

ե) Բջիջներում ու խորհուրդներում կազմակերպել կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորներ, համախմբել ակտիվ։

զ) Ծավալել Պաջր-Ավիաքիմի աշխատանք ազգային մարզերի կանանց ակումբներում։

է) Համաձայն կանանց համամիութենական 1-ին խորհրդակցության վորոշման՝ անցկացնել միջոցների հավաք՝ կառուցելու համար Պաջր-Ավիաքիմի հատուկ ագիտ-սավառնակ՝ ի հավերժացումն այդ խորհրդակցության։

Խորհուրդների ու բջիջների կանանց սեկտորները պետք է անմիջապես կազմեն 1-ին համամիութենական կանանց խորհրդակցության վորոշումների մշակման ու իրացման կամպանիայի օրացուցային պլաններ այնպես, վոր կամպանիայի հետ կապված իրենց աշխատանքով ընդգրկեն Պաջր-Ավիաքիմի անդամ կանանց, այլ կամավորական ընկերությունների (Կարմիր Խաչի, Ավտոդորի, Ռադիո Բարեկամների Ընկերության և այլն) ակտիվ կանանց և բանվորուհիների, կոլտնտեսուհիների և բանվորների կանանց լայն խավերին։

Կամպանիայի ընթացքի ստուգման կարգով փետր-

վար–մարտ ամիսների ժամանակաշրջանում մարզային խորհուրդների նախագահություններում լսել զեկուցումներ մի շարք ռայոնական խորհուրդներից՝ 1–ին համամիութենական կանանց խորհրդակցության վորոշումների հիման վրա կանանց հետ տարվող Պաշը–Ավիաքիմի աշխատանքի վերակառուցման մասին:

Վորոշումների իրացման լավագույն աշխատանքի փորձն անհրաժեշտ է լուսաբանել թե՛ տեղական և թե՛ կենտրոնական մամուլում՝ «Օսոավիախիմ» ամսագրում, «На страже», «Красная Звезда», «Работница», «Крестьянка», «Делегатка» և այլն:

Կամպանիան պետք է անցնի հետևյալ լոզունգի տակ.

«17–րդ համամիութենական կուսկոնֆերանսին ապահովենք կանանց հետ տարվող աշխատանքի վճռական բեկումը և միջազգային կանանց Որվան–մարտի 8–ին ապահովենք Պաշը–Ավիաքիմի 1–ին համամիութենական կանանց խորհրդակցության վորոշումների լիակատար իրացումը»:

Կամպանիայի ընթացքը պարբերաբար լուսաբանել հատուկ սվոդկա–զեկուցագրերով, ուղարկելով ԽՍՀՄ Պաշը–Ավիաքիմի կենտրոնական խորհրդին յուրաքանչյուր ամսվա 1–ին ու 15–ին, սկսած 1932 թվի հունվարի 15–ից:

Առդիր՝ 1–ին համամիութենական կանանց խորհրդակցության վորոշումները:

ԽՍՀՄ Պաշը–Ավիաքիմ միության և ՌԽՖՍՀ Պաշը–Ավիաքիմի գլխավոր քարտուղարի տեղակալ՝

Դ. ԼԻՊՑԻՍ

Ագիտ–մասսայական բաժնի պետի ժամ. պաշտ.

ԿՈՂԵՍՆԻԿՈՎ

Կանանց աշխատ. սեկտորի վարիչ՝ ՑԵ. ԿՈՒԶՆԵՑՈՎԱ



# ԲԱՆԱՁԵՎ

## ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Աշխատավոր կանանց հետ տարվող ռազմական աշխատանքի հիմնական թերությունները են.—

ա) Մի շարք կազմակերպություններում կանանց ռազմական աշխատանքին ներգրավելու կարևորության թերագնահատման առկայությունը.

բ) Պաշը–Ավիաքիմի կազմակերպությունների մեծամասնության մեջ կանանց հետ տարվող ռազմական աշխատանքի պլանի բացակայությունը.

գ) Ռազմական ուսուցման բոլոր տեսակներով կանանց ընդգրկման ու մշակման տոկոսի խիստ անհամապատասխանությունը՝ համեմատած ընկերության անդամ կանանց քանակական ընդհանուր աճման հետ, իսկ ուսուցման վորոշ տեսակներից նաև այդ ընդգրկման իջեցումը՝ համեմատած նախընթաց տարիների հետ:

դ) Ռազմական աշխատանքի հատուկ թույլ դրությունն ազգային հանրապետությունների ու մարզերի աշխատավոր կանանց մեջ:

ե) Տեղերում այն կանանց հաշվառման բացակայությունը, վորոնք անցել են այս կամ այն մասնագիտության ռազմական ուսուցում, վոչ միայն Պաշը․ Ավիաքիմի կազմակերպության գծով, այլ վորոշ դեպքում նաև ռազմկոմբատների գծով, վորոնք լիովին չեն իրագործում այդ հարցի առթիվ Ռազմական վարչության համապատասխան ցուցումները:

2. Աշխատավոր կանանց ռազմական պատրաստությունը պետք է անց կացնել, լայն չափով ներգրավելով նրանց և, առաջին հերթին, բանվորուհիներին, կոլտնտեսուհիներին և կոմունիստ կանանց, գործնական այն կազմակերպությունների մեջ, վորոնց նպատակն է.

ա) Ռազմական տեխնիկայի տիրապետումը.

բ) Ռազմա–վարժական կադրերի պատրաստությունն ըստ մասնագիտությունների, այն է՝ հեռախոսի, հեծելազորի, գնդացրային գործի, հրետանու, զրահա–տանկային գործի.

գ) Կարմիր բանակի մի շարք մասնագիտական և ոժանդակ ծառայությունների կադրերի պատրաստություն (կապավորների, վարչատնտեսական աշխատողների ավտոտրանսպորտային մեքենավարների, տեղագրերի, հեռախոսչների և այլ դասընթացների)։

ԲԳԿԲ քաղլուսաշխատողների պատրաստության տեսակետից անհրաժեշտ է առավելապես ընթանալ լուսբաժինների, քաղլուսբաժինների և այլ կազմակերպությունների բացած քաղլուսդասընթացների ծրագրերի ռազմականացման գծով։

Նկատի ունենալով վարժակայանների ցանցի այն առկայությունը ,վոր բավական է միայն ընդգրկելու համար նրանց, ովքեր անցնում են նախակոչային պատրաստությունը, կանանց ռազմական պատրաստությունը 1932 թվին այդ վարժակայաններում հնարավոր է միայն գլխավորապես ըստ մասնագիտությունների՝ կապի, ԲԳԿԲ վարչատնտեսական աշխատողների, ավտոտրանսպորտային մեքենավարների, տեղագրերի, իսկ աշխատավոր կանանց ռազմական ուսուցումն ըստ մասնագիտությունների՝ հետևակի, գնդացրային, հրետանու, հեծելազորի, զրահատանկայինի,—հիմնականում անց է կացվում դասընթացների, խմբակների և այլ կարգով։

3. Հատուկ կանանց ճամբարներ կազմակերպելը համարել աննպատակահարմար, թույլ տալով բացառություն միայն ազգային մարզերի ու հանրապետությունների համար։ Իսկ ինչ վերաբերում է կանանց հատուկ ճամբարային հերթեր ջոկելուն, այդպիսիներն անցկացնել միայն բացառապես այն նպատակով, վոր ջոկվեն միատեսակ վարժական ծրագրերով սովորողների կոնտինգենտներ։

4. Ցերթերի ու մանյովրաների ներգրավել բացառապես այն կանանց, ովքեր ունեն ռազմական պատրաստություն, ըստ վորում հիմնականում միայն ոժանդակ ծառայություն կրելու համար (հեռագրիչներ, ազդարարներ, հեռախոսչներ և այլն)։

5. Կանանց հետ տարվող ռազմական աշխատանքի սիստեմի մեջ պլանայնություն ու ստուգություն մտցնելու նպատակով անհրաժեշտ համարել կանանց ռազ-



մական աշխատանքի բոլոր տեսակներում դիֆերենցված տակտային նորմաների մշակումը, հասցնելով ընդգրկումը մինչև Պաշ–Ավիաքիմի շարքերում յեղած կանանց ընդհանուր կազմի 20–25 տոկոսին։

6. Քաղաքացիական ավիացիայի, պլանյորական դպրոցներում և ավիամոդելային խմբակներում ամրացնել կանանց համար սահմանված նորմա։

7. Նկատի ունենալով կանանց ռազմականացման միանգամայն անբավարար դրությունը Կարմիր Խաչի Ընկերության, Ավտոդորի, Ռադիո-Բարեկամների Ընկերության կամավորական կազմակերպության սիստեմում, Ընկերության կազմակերպությունները պետք է ամենակարճ ժամանակամիջոցում համաձայնեցնեն նրանց հետ իրենց աշխատանքը, նշեն միասին կոնկրետ միջոցառումներ զարգացնելու համար այդ կազմակերպություններում ռազմական աշխատանքը, ցույց տալով նրանց ամեն կերպ աջակցություն և օգնություն։

8. Հսկայական նշանակություն տալով ռազմական և գործնական պատրաստությանը, կանանց հետ աշխատանք տանող յուրաքանչյուր սեկտոր պետք է իր մոտ հաշվառած ունենա ռազմականացված դասընթացներում պատրաստված կանանց ճիշտ քանակը, օգնություն ցույց տալով ռազմկոմատներին՝ հայտաբերելու և հաշվի առնելու այն կանանց, վորոնք անցել են ռազմական պատրաստության համապատասխան տեսակները։

9. Ամենալուրջ ուշադրություն նվիրել ռազմական հրահանգիչների պատրաստմանն այն կանանցից, վորոնք հաջողությամբ անցել են Պաշ–Ավիաքիմի ռազմական պատրաստությունը, մանավանդ ազգային մարզերում ու հանրապետություններում։

---

## ԲԱՆԱՁԵՎ
## ՀԱԿԱՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Յերկրի հակաոդային պաշտպանության կազմակերպումը պահանջում է այդ աշխատանքին ներգրավել

աշխատավորության լայն խավերին: Պաշր-Ավխաքիմի հնգամյա պլանի կոնտրոլ թվերով նախատեսվում է ստեղծել գլխավորապես սահմանամերձ մարզերում հակաոդային պաշտպանության 2500 խումբ (կոմանդ), ոդային դիտողության ու կապի (ВНОС) 1500 պոստ և մի շարք այլ հատուկ կազմակերպություններ, ընդգրկելով նրանցում ընդհանուր առմամբ մոտ 500·000 հոգի: Բացի դրանից, Պաշր-Ավխաքիմի աշխատանքով պետք է ապահովված լինի բնակավայրերում հակաոդային պաշտպանության օբյեկտների Ռազմական վարչության աշխատանքի աջակցությունը:

ՀՈՊ (հակաոդային պաշտպանության) աշխատանքով ընդգրկման յենթակա հիմնական կոնտինգենտը հանդիսանում են աշխատավոր կանայք, վորոնցից գլխավորապես պետք է ապահովվի Պաշր-Ավխաքիմի ՀՈՊ կազմակերպությունների անձնական կազմը:

2. Կանանց համամիութենական խորհրդակցությունն արձանագրում է, վոր Պաշր-Ավխաքիմի ՀՈՊ աշխատանքում վերջերս կա հառաջադիմություն առավել մեծ չափով աշխատավոր կանանց ՀՈՊ գործնական աշխատանքներին ներգրավելու տեսակետից. ՀՈՊ ղեկավար կադրերի մեջ Պաշր-Ավխաքիմի ապարատում կանայք կազմում են $5^{0}/_{0}$, խմբերի պետերի մեջ ԲԽՍՀ՝ $90^{0}/_{0}$, Ադրբեջանում՝ $60^{0}/_{0}$, ՌԽՍՀ՝ $40^{0}/_{0}$ և այլն, ՀՈՊ խմբերի կազմում կանայք կազմում են Ուկրայինայում $70–80^{0}/_{0}$, ԲԽՍՀ՝ բացառապես կանանց խմբեր են և այլն:

Կանայք մեծ չափով ընդգրկված են ՀՈՊ անգրագիտության վերացումով մի շարք կազմակերպություններում (ՌԽՍՀ, Լենինգրադ, ԲԽՍՀ և այլն):

3. Դրա հետ նկատվում են հետևյալ հիմնական թերությունները:

ա) ՀՈՊ ղեկավար աշխատանքի համար կանանց ընտրանքը կատարվում է առանց պատշաճ ուշադրության, վորի հետևանքով մի շարք դեպքերում ՀՈՊ դասընթացներն ավարտած կանայք պատշաճ չափով չեն կարողանում ոգտագործվել գործնական աշխատանքներում:



Միևնույն ժամանակ հետևում է, վոր կազմակերպությունները բավականաչափ ոգնություն ցույց չեն տալիս ՀՈՊ նկատմամբ առաջ քաշված կանանց, և չեն աջակցում, վորպեսզի սրանք տիրապետեն աշխատանքին, մի շարք դեպքերում ստեղծելով այնպիսի պարագա, վորը գցում է նրանց ակտիվությունն ու հեղինակությունը, դնելով ՀՈՊ ազատված պաշտոններում աշխատող կանանց վատթարագույն նյութական պայմանների մեջ: Միևնույն պարտականություններում աշխատող տղամարդկանց համեմատությամբ:

բ) Կինսեկտորները բավականաչափ չեն ներկցվել ՀՈՊ աշխատանքներին.

գ) Թույլ է Համլկյեմ և Համկոմկուսի (բ) անդամ կանանց ընդգրկումը ՀՈՊ աշխատանքներով.

դ) Բավականաչափ ծավալված չէ ՀՈՊ աշխատանքը կանանց մեջ գյուղի սոցիալիստական սեկտորում, նոր շինարարություններում, տրանսպորտում և արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների նոր կադրերի մեջ:

4. ՀՈՊ բնագավառում աշխատավոր կանանց հետ տարվող աշխատանքի հերթական խնդիրների ընդհանուր սիստեմում մեծ ուշադրություն պետք է նվիրել կանանց հետագա առաջ քաշմանը ՀՈՊ ղեկավար աշխատանքի համար, հասնելով նրան, վոր առաջիկա ամենամոտ ժամանակաշրջանում (1932 թվին) Պաշր-Ավխաքիմի ՀՈՊ ղեկավարների մեջ առնվազն լինեն 30 կանայք:

Բարձրացնելու համար ՀՈՊ ղեկավար աշխատանքի համար առաջ քաշված կանանց վորակը, նրանց համար դասընթացներում ու դպրոցներում մտցնել բրոնյա վերապահված տեղերի վոչ պակաս քան $40^{0}/_{0}$ չափով: Միաժամանակ ստեղծել հատուկ սեմինարներ՝ բարձրացնելու համար նրանց ռազմական վորակավորումը, ամրացնել նրանց վորպես ոգնականներ ու խորհրդատուներ համապատասխան ռազմական մասնագետներ, ՀՈՊ ղեկավար կազմի կանանցից ներգրավել ՀՈՊ պետկազմի հավաքներին:

5. Շարունակելով ՀՈՊ խմբերն ու մասերը կանանց

ներդրավման հետագա աշխատանքը հասնել նրան, վոր մոտակա ժամանակամիջոցում ՀՌՊ խմբերի պետերի մեջ կանայք կազմեն առնվազն 60%, վորպես կրտսեր հրամանատարներ՝ 70 տոկոս և սովկական կազմի մեջ կանայք կազմեն 80 տոկոս:

6. ՀՌՊ աշխատանքների սիստեմում բացառիկ նշանակություն ունի աշխատավոր կանանց մեջ սպառնալից շրջանում գլխովին և մնացած ռայոններում մասսայական ՀՌՊ անգրագիտության վերացումը:

7. Կանանց մեջ ՀՌՊ աշխատանքները տանելիս հատուկ ուշադրություն պետք է նվիրել այդ աշխատանքով ձեռնարկությունների, նոր շինարարությունների, տրանսպորտի աշխատանքների և մանավանդ բանվորների նոր կադրերի ընդգրկմանը:

8. Ծավալել ՀՌՊ աշխատանքները կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում, ներգրավել կանանց Ոդային դիտողության ու կապի պոստերը, գործադրելով միևնույն ժամանակ ՀՌՊ մասսայական աշխատանքի բոլոր տեսակները:

9. Խորհրդակցությունն առանձնապես շեշտում է, վոր անհրաժեշտ է ծավալել ՀՌՊ աշխատանքները ազգային մարզերի կանանց մեջ (Միջին Ասիա, ԱԽՖՍՀ, Հեռավոր Արևելք, Արևելյան Սիբիր): Լայն չափով անցկացնել ՀՌՊ անգրագիտության մասսայա- [illegible] նանց մեջ, հասնելով այնտեղ նրան, վոր ԽՍՀՄ այդ ռայոնների պես ապահովվի տեղացի կանանց առավելագույն մասնակցությունը ՀՌՊ զորամասերում ու խմբերում, խնդիր ունենալով ազգային մարզերում կանանց կազմը ՀՌՊ խմբերում ու ղեկավար պաշտոններում հասցնել 100 տոկոսի:

10. Ապահովելու համար ՀՌՊ բոլոր կազմակերպություններում կուսակցական-կոմյերիտական հաստատուն վողնաշարը, անհրաժեշտ է հասնել նրան, վոր ՀՌՊ աշխատանքով 100 տոկոսով ընդգրկված լինեն Համկոմկուսի (բ) ու ՀամԼԿԵՄ կին անդամները, բա



վորում վերջինները տվյալ աշխատանքով պետք է ընդգրկվեն նրանց զինվորական պարտադիր պատրաստության մասին ՀամԼԿԵՄ IV համագումարի վորոշումների կատարման կարգով:

11. ՀՌՊ խմբերում մասնագիտական պատրաստության հետ միասին պետք է տարվի քաղդաստիարակչական ու կուլտուր-լուսավորական աշխատանք (քաղպարապմունք, անգրագիտության վերացում, հանրակրթական աշխատանք): Մեծ հնարավորություններ կան նաև ծավալելու համար կուլտուր-կենցաղային աշխատանքը. սանիտարական ջոկերն իրենց հիմնական մասնագիտական աշխատանքի կատարման հետ միասին դաստիարակում են աշխատավոր բնակչության սանիտարական պատրաստման ակտիվ, ստեղծելով բնակավայրի սանիտարական բջիջներ, սանհանձնաժողովներ, առաջին բժշկական ոգնության տնային կայաններ և այլն:

Գազաթափման ջոկերն ապահովում են բնակարանների գազաթափման գազահանման ակտիվ:

Հրդեհաշեջ ջոկերն ապահովում են հրդեհաշիջային պահպանության ուժեղացման և բնակարանների հսկողության ակտիվ և այլն:

Կազմակերպություններից մի քանիսի փորձով (ԲԽՍՀ և Ուկրայինա) լայն չափով պետք է տարածել մանկամսուրների և մանկական օջախների կազմակերպումն այն կանանց զավակների համար, վորոնք զբաղվում են ՀՌՊ խմբերում ու մասերում. այդ հնարավորություն է տալիս աշխատավոր կանանց նորմալ աշխատանք տանելու այդ խմբերում ու մարզերում:

12. ՀՌՊ աշխատանքի մեծ թափի ժամանակ, երբ այնտեղ մասնակցում են աշխատավորների լայն խավեր, հնարավոր է, վոր ՀՌՊ խմբերի ու մասերի մեջ անտեսումների քողի տակ սողոսկեն դասակարգայնորեն խորթ ու հակախորհրդային տարրեր: Այդ պատճառով խորհրդակցությունը կոչ է անում ուժեղացնել դասակարգային աչալրջությունը և խնամքով կատարել ՀՌՊ բոլոր գործնական կազմակերպությունների անձնական ընտրանքը:

---

# ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԿԱՆԱՆՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(Թեզիսներ)*

**1. Համաշխարհային բուրժուազիան տնտեսական ճգնաժամից ելք է փնտրում նոր պատերազմներում և խորհուրդների յերկրի դեմ ինտերվենցիայում.**

*Ամբողջ կապիտալիստական տնտեսության խորագույն տնտեսական ճգնաժամն ու կաթվածը: Հրեշավոր գործազրկությունը, 35–40 միլիոն գործազուրկներ քաղաքներում, միլիոնավոր գործազուրկներ գյուղացիության մեջ: Մասսաների սնանկացումը: Բանվոր դասակարգի անօրինակելի շահագործումն ու կենսական մակարդակի իջեցումը: Բուրժուական ելք է փնտրում պատերազմի մեջ: Հակասությունները կապիտալիստական յերկրների միջև շուկաների համար, հումքի աղբյուրների համար: Հիմնական հակասությունը բուրժուական աշխարհի ու ԽՍՀՄ միջև:*

**2. ԽՍՀՄ սոցշինարարության հաջողությունները առաջացնում են բուրժուազիայի ատելությունը.**

*Մեր հաջողությունները. 5-ամյակը 4 տարում, աշխատավորների կենսական մակարդակի բարելավումը, կուլտուրական աճումը, մահացու վտանգ են բուրժուազիայի համար: Կապիտալիստական յերկրների բանվորները, համեմատելով իրենց դրությունը մեզանում տիրող դրության հետ, գալիս են այն հետևության, թե՝ «ինչո՞ւ հանդուրժել բուրժուազիայի իշխանությունը»...*

*Յուրաքանչյուր նոր գործարան, հանքահոր կոլտնտեսության մի նոր ամրոց են միջազգային պրոլետարիատի համար:*

**3. Բուրժուազիան պատրաստվում է պատերազմի.**

*13 տարին, վոր անցել են այն օրից, յերբ վերջացել է համաշխարհային պատերազմը, յեղել են անընդհատ սպառազինումների տարիներ. մանավանդ ամենախիստ սպառազինումների տարի էր 1926 թիվը:*

*Վերջին 5 տարվա ընթացքում Յեվրոպայի կապիտալիստական պետությունները նոր պատերազմի սպառազինումների համար ծախսել են 13 միլիարդ վոսկի ռուբլի:*

*Անցքերը հեռավոր Արևելքում,—Ճապոնիայի կողմից Մանջուրիայի օկուպացիան,—փաստորեն նոր իմպերիալիստական պատերամի սկիզբ են հանդիսանում Չինաստանի բաժանման համար, հեղափոխական շարժումը Չինաստանում ճնշելու համար, Խորհրդային Միության շրջապատման համար:*

**4. Իմպերիալիստներն անց են կացնում կանանց ռազմականացումը.**

*Կապիտալիստները գալիք պատերազմի համար պատրաստում են վոչ միայն մեքենաներ, գազեր, այլև նվիրված մարդիկ:*

*Գալիք պատերազմը միլիոնների պատերազմ է, պատերազմ, վորը չի ունենալու խստիվ սահմանագծված ճակատ ու թիկունք: Գալիք պատերազմը միաժամանակ քաղաքացիական պատերազմ է լինելու հեղափոխական բանվորական կազմակերպությունների դեմ: Բուրժուազիան այդ պատերազմների համար մոբիլիզացիայի յե յենթարկում կանանց, վորպես ամենից հետամնաց ու դասակարգայնորեն անգիտակից տարրի:*

*Ընկ. Լենինը գրում էր 1914 թվին.—«Այսօր իմպերիալիստական բուրժուազիան ռազմականացնում է բոլորին, մինչևիսկ յերիտասարդությանը: Վաղը նա* կանցնի արդեն կանանց ռազմականացմանը»:

*Այդ «վաղն» արդեն հասել է: Բուրժուազիան անց է կացնում կանանց ռազմականացում:*

*5. Մի շարք յերկրներում անցեն կացնում ՈՐԵՆՔՆԵՐ, վորոնք նախատեսնում են կանանց զորահավաք՝ պատերազմի դեպքում:*

Ֆրանսիա.—*Սոցիալ-դեմոկրատ Պոլ Բոնկուրի «Ազգերի պաշտպանության որենքը», վոր հրատարակվել է 1926 թվին, պատերազմի համար նախատեսում է* ամբողջ բնակչության մոբիլիզացիան:

Լեհաստան.—*18 տարեկան աղջիկներին մեկ ու կես տարի ժամանակով զորակոչի որենքը (որինագիծը 1930*

թվին մշակված է բուրժուական կանանց կազմակերպության կողմից)։

Չեխոսլովակիա.—Մտցրված է կանանց զինապատրաստության և 6 տարեկան հասակից յերեխաների ռազմական ուսուցման օրենք։

Գերմանիա.—Պատրաստվում են կանանց ներգրավել բանակի կազմի մեջ։

Սոցիալ-դեմոկրատները ծափահարություններով ընդունեցին ռազմական մինստրի ռայխստագում արած հայտարարությունն այն մասին, որ արժե Բոնկուրի օրենքը կիրառել Գերմանիայի պայմաններում։

Ֆաշիստները մի առաջարկ մտցրին ռայխստագ՝ «ազգային աշխատանքային պարհակ» մտցնելու 17–21 հասակի արական և իգական յերիտասարդության համար։

Զարգանում է արտամանովրյան շարժումը. այն է՝ նախապատրաստվել կանանց ռազմականացման։ Հարկադրական աշխատանքային պարտականություն է մտցրված Բուլղարիայում, Իտալիայում, Շվեցարիայում։

ՀԱՄՆ.—Քաղաքացիական իրավունքներ ստանալ ցանկացող կանայք ստորագրություն են տալիս» զենքով պաշտպանելու հայրենիքը»։

Այդպիսով մի շարք յերկրներում բուրժուազիան արդեն անց է կացնում կանանց ռազմականացում։

6. Բուրժուազիան մոբիլիզացիայի յե յենթարկում իր ոժանդակ կազմակերպությունները՝ կանանց պատերազմի համար պատրաստելու նպատակով։

Բուրժուազիան ընթանում է յերկու ուղղությամբ։

ա) աշխատավոր կանանց հեղափոխական, հակաիմպերիալիստական տրամադրությունները թմրեցնելու ուղղությամբ. պացիֆիստները, ֆեմինիստականները, սոցիալ-դեմոկրատ կանայք, զանազան քրիստոնյական միությունները քողարկում են պատերազմի և ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի պատրաստությունը, հավատացնելով, որ Ազգերի Լիգան ու 2-րդ Ինտերնացիոնալը գրավական են հանդիսանում պատերազմի դեմ։



620
38

Նրանք սուտ պատրանքներ են սերմանում, մթագնում են բանվոր դասակարգի ազատագրությունը, աչալրջությունը, կտրում են բանվորուհիներին դասակարգային պայքարից։

բ) Մի այլ ուղղությունն էլ այն է, որ բուրժուազիան կազմակերպում է կանանց մարտական կազմակերպություններ,—կանանց ֆաշիստական միություններ, բուրժուական սպորտիվ միավորություններ, կանանց վոստիկանություններ, ռազմականացնում է արտադրություններում բանվորուհիներին։

Բուրժուազիան ներգրավում է բանվորուհիներին և աշխատավոր կանանց այդ կազմակերպությունների մեջ, պատրաստում է նրանց պատերազմի կարիքների համար և պայքարելու համար հեղափոխական շարժման դեմ։

7. Ֆաշիստական կանանց կազմակերպությունները իմպերիալիստների ոժանդակ ջոկատներն են.

8. Գերմանիայում.—«Թագուհի Լուիզայի միություն» 1925 թվից.—«Պողպատե սաղավարտ» կանանց կազմակերպություն (մոտ 500.000 կին)։

Ազգ.—Սոցիալիստների կանանց կազմակերպություն (Հիտլեր)—45 հազար կին (լոզունգն է՝ «Պայքար դասակարգային պայքարի դեմ»)։

Վերվոլֆի կանանց կազմակերպություն (Ռազմական միությունների կենտրոնական միավորություն) 35 հազար։

«Սեստրինյան կազմակերպություն (Ցերիտգերմանական միաբանության կից)—25.000 հոգի։

Ֆինլանդիա.—Լոտտա-Սվյարդ 47.000 հոգի (բաժանված է ըստ ռազմական շրջանների։

Շվեդիա.— Լոտտա-Սվյարդ.—մոտ 10.000 հոգի։

Լեհաստան.—բազմաթիվ ռազմական կանանց կազմակերպություններ. օրինակ «Հրաձիգների միություն» 70 հազար հոգի, կանայք 5,051 հոգի, կաթոլիկական կանանց կազմակերպություն «կանանց ռազմական պատրաստության համար» 16,000 կին։

Եստոնիա.—«Պաշտպանության Լիգա»։



2242—2

Լատվիա․—«Հեյմվեր» (ֆաշիստ․ կազմակերպություն):

Չեխո-Սլովակիա․ — «Բազեներ», «Արծիվներ» (հարմարեցված պատերազմի ու քաղաքացիական կռիվների համար):

Բալկաններում․—բազմաթիվ ռազմական ու ազգայնական կանանց կազմակերպություններ:

ՀԱՄՆ․—«Կու-կլուքս-կլան» կանանց կազմակերպություն․ «Աղջիկների ճամբարների ազգային ֆեդերացիա»—250․000 հոգի:

Անգլիա․—Կանանց կազմակերպություններ ֆաշիստական միություններին ու Մոսլի նոր ֆաշիստական կառավարության կից:

Իտալիա․—Ֆաշիստների կին կազմակերպություններ—520․000 կին անդամներով:

**8․ Ֆաշիստական կազմակերպությունների ռազմական աշխատանքի մեթոդները․**

ա) Վարժություններ հրաձգությունից հրացաններով ու ատրճանակներով․

բ) Վարժություններ կապից՝ հեռախոսային ու ծառայության․

գ) Վարժություններ սանիտարական գործից․

դ) Վարժություններ ռազմական լրտեսությունից ու հետախուզությունից:

Վարժություններ ձիավարժությունից, սուսերամարտից, մարմնամարզությունից, լողից, յերթեր ռազմական հանդերձանքով, ոգնություն «ոժանդակ ծառայության մեջ», հեղափոխականորեն տրամադրված անձերի հետևում, նրանց հասցեների հավաքում և այլն:

**9․ Ֆաշիստական կանանց կազմակերպությունների գործունեությունը․**

Ֆաշիստների հետ միասին զորահանդեսներին ու ցույցերին դուրս գալը, ոգնություն ֆաշիստական հարվածողներին բանվորների վրա հարձակման ժամանակ: Ֆաշիստների զենքի ու հանդերձանքի պահպանումը բանվորների հետ ընդհարման ժամանակ․ (որինակներ) Կեյշտապատ՝ բանվորների դեմ, հրաձգություն և՝ ծեծ պող



պատե ճիպոտներով․ Բեռլին՝ ֆաշիստների թիկունքի պահպանում:

Հեղափոխական «կասկածելի» անձանց հասցեների հավաք (Լեհաստան):

Մասնակցություն Լինչի դատաստաններում (Ամերիկա):

**10․ Բուրժուական սպորտիվ միավորություններ․**

Առանձնապես զարգացած են Գերմանիայում (750 հազար կին): Նպատակն է՝ «Գերմանական յերիտասարդության մարտունակության բարձրացումը՝ հաղթահարելու համար ներքին թշնամուն և հայրենիքի պաշտպանության համար»:

Փաստորեն բուրժուական սպորտաշարժումը Գերմանիայում «Նոր Գերմանիայի» կամավորական զորքերի կորիզն է:

Բուրժուական սպորտ կազմակերպությունները պետական ոգնություն են ստանում սոցիալ-դեմոկրատ մինստրներից, կազմակերպում են զորահանդեսներ, ծառայում են յերկսեռ յերիտասարդության ռազմական դաստիարակության համար:

Բուրժուական սպորտմիավորումներ կան նաև Ավստրիայում, Ֆրանսիայում, Չեխո-Սլովակիայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ամերիկայում:

**11․ Գործարանների բանվորուհիների ռազմականացումը․**

Իմպերիալիստական պատերազմի փորձը սովորեցրեց բուրժուազիային արտադրությունն անմիջապես ռազմական արտադրանքի անցնելու պատրաստության հետ միասին պատրաստվել կանանց աշխատանքով ռազմական արտադրանքն սպասարկելուն:

Դրա հետ միասին ձեռնարկատերերն անց են կացնում ռազմական արդյունաբերության գլխավոր ճյուղերի բանվորների ու բանվորուհիների ռազմական կազմակերպումը:

Ֆրանսիա․—Քիմիական արդյունաբերության բանվորուհիների թիվը վերջին 5 տարվա ընթացքում աճել է 17 տոկոսով (180․000 կին):

Արհեստական մետաքսի արդյունաբերության մեջ 80 տոկոս բանվորուհիներ են (Լիոնում 48 ժամվա մոբիլիզացիա յե՝ անցնելու համար պայթուցիկ նյութերի արտադրության):

Լեհաստան.—Ռադոմի, Կեյլցի զինագործարաններում 25 տոկոսը կանայք են:

Ռումինիա.—Լիակատար ռազմականացում է կատարված ժողովրդական տնտեսության, տրանսպորտի ու կապի:

Անգլիա.—Պայթուցիկ նյութերի արդյունաբերության մեջ մինչև 30,2 տոկոսը կանայք են. 1930 թ. վերացված է կանանց համար գիշերային աշխատանքների արգելումը:

Ճապոնիա.—Քիմիական ինդուստրիայում 36 տոկոսը կանայք են, ռազմական հանդերձանքի արտադրությունում՝ 30 տոկոսը:

Չեխո-Սլովակիա. — Քիմիական արդյունաբերության մեջ 60 տոկոսը կանայք են:

Ռազմական գործարանների բանվորուհիների նկատմամբ գործադրվում են մի շարք հատուկ միջոցներ.

ա) Այն բանվորուհիները, վորոնք նկատված են միտինգներ, ժողովներ և այլն հաճախելու մեջ, անմիջապես հեռացվում են ծառայությունից.

բ) Գործարանը ծառայության ընդունելիս պահանջվում է ֆաշիստական միությունների (Գերմանիա) կամ հուսալի անձանց յերաշխավորություն.

գ) Աշխատողների նկատմամբ սահմանվում է մըշտական լրտեսություն, խոսակցությունների ունկնդրում (պատերի մեջ միկրոֆոններ և այլն):

դ) Կանանց ֆաշիստական կազմակերպությունները հատուկ յեռանդուն աշխատանք են ծավալում ռազմական ձեռնարկությունների բանվորուհիների մեջ:

12. Կանանց վոստիկանությունը բուրժուական բանակի բաղադրիչ մասն է քաղաքացիական կռիվների համար.

Բուրժուական մամուլը գովաբանում է կանանց վոստիկանությունը՝ վորպես «բարի բարքերի ու կարգի» պահապանի: Կանանց վոստիկանության ղեկավարը Լոն-



դոնում հայտարարել է՝ «մեր կին վոստիկանները արիյեն, վորպես առյուծ և ուժեղ են, վորպես արջ. Նրանք հաղթում են ամենազարգացած մկաններ ունեցող բանվորներին»...

Փաստորեն կանանց վոստիկանությունը բուրժուազիայի ոժանդակ ջոկատն է՝ պայքարելու համար բանվոր դասակարգի դեմ: Նա ոգտագործվում է խուզարկությունների, ձերբակալությունների, բանվորական ցույցերի ցրման դեմ և այլն, ընդհանուր վոստիկանության հետ միասին:

Կանանց վոստիկանություն գոյություն ունի.--

Անգլիայում.—զարգացած է կանանց վոստիկանական ցանցը.

Գերմանիայում.—մի քանի արդյունաբերական քաղաքներում.

Իտալիայում.—կանանց միլիցիան պատերազմի դեպքում պետք է վերածվի ոդային Թիկունքի միլիցիայի:

Լատվիայում ու Թյուրքիայում.—միայն 1931 թվին են ընդունված կանանց միլիցիա մտցնելու որենքներ:

13. «Կարմիր խաչ».—Բուրժուազիայի սանիտարական զորասյուներ գալիք պատերազմում,—բոլոր կապիտալիստական յերկրներում գտնվում են բուրժուական գործիչների ձեռքում և համապատասխան ձևով դաստիարակում են իրենց կադրերը:

Գերմանիա.—«Կարմիր Խաչն» ունի մոտ 800,000 անդամ, աշխատում է նախկին արքունական տիկնաց ու սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ:

Ֆրանսիա.—«Կարմիր Խաչի» գլուխ են կանգնած «Ֆրանսիայի կանանց միության» ազգայնական կազմակերպությունների ղեկավարները:

Իտալիա.—«Կարմիր Խաչ» դասընթացները գտնվում են ֆաշիստ կանանց իրավասության տակ:

Կապիտալիստական յերկրներում «Կարմիր Խաչի» դասընթացներն ավարտողներից ստորագրություն են վերցնում այն մասին, վոր նրանք պարտավորվում են պատերազմի կամ «անկարգությունների» դեպքում ան-

միջապես դառ զորակոչի և յենթարկվել ռազմական օրենքներին:

Այսպիսով բուրժուազիան «Կարմիր Խաչի» միջոցով ստեղծում է իրեն համար հուսալի սանիտարական զորասյուներ:

**14. Բանվորուհու դերն արտադրությունում ու դասակարգային մարտերում աճում է տարեցտարի.**

Կապիտալիստական յերկրի արտադրության մեջ բանվորուհին գրավում է նշանավոր տեղ: Այսպես օրինակ՝ Գերմանիայում՝ 40% Ֆրանսիայում՝ 42%, Անգլիայում՝ 28%, Լեհաստանում, Ֆինլանդիայում, Ավստրիայում՝ ավելի քան 30 տոկոս, Արևելքում՝ ավելի քան 50 տոկոս:

Կապիտալիստական ռացիոնալացումը պարզեցրել է աշխատանքը և հնարավորություն է տվել բանվորական վորակյալ ուժը փոխարինելու կանանց ու յերեխաների վոչ վորակյալ աժան ուժով:

Կապիտալիստական վոչ մի յերկրում բանվորուհին հավասար աշխատավարձ չի ստանում բանվորի հետ կատարած հավասար աշխատանքի համար—նա ստանում է բանվորի աշխատավարձի մի մասը միայն և ավելի պակաս սոցապահովագրություն:

Այդ պատճառով համաշխարհային տնտեսական ճգնաժամն ավելի մեծ հարված է հասցնում բանվորուհուն:

Չնայած նրան, վոր բանվորուհիներն իրենց մասսայով հանդիսանում են բանվոր դասակարգի ամենից հետամնաց, չկազմակերպված ջոկատը,—բայց ավելի ու ավելի ուժեղացող հրեշավոր շահագործումը և բանվոր դասակարգի դեմ կապիտալիստների գործած ճնշումը հրամայողաբար հրում է բանվորուհուն դեպի պայքար:

Այդ պայքարը հաճախ անցնում է տարերայնորեն, անկազմակերպ: Բայց հենց պայքարում բանվորուհիները ցուցաբերում են մարտական բարձր պատրաստակամություն, ակտիվություն, անձնազոհություն:

Պայքարում—նրանք վարժվում են տարբերել իրենց բարեկամներին թշնամիներից: Բանվորուհիներն ավելի



ու ավելի հաճախ են մտնում կոմկուսակցությունների ու կարմիր արհմիությունների շարքերը:

Բուրժուազիան լարում է իր բոլոր ուժերը, վորպեսզի կտրի բանվորուհիներին և աշխատավոր կանանց պրոլետարիատի ընդհանուր դասակարգային պայքարից, ոգտագործի նրանց իր նպատակների համար:

Այդ պատճառով է ահա, վոր այդչափ յեռանդով աշխատում են կանանց մեջ Ֆաշիստական սոցիալ-դեմոկրատական, պացիֆիստական ու քրիստոնեյական կազմակերպությունները:

Նրանք անց են կացնում հազարավոր ժողովներ, հրատարակում են հազարավոր ամսագրեր, գրքույկներ, զրպարտելով կոմունիզմը: Նրանք տակավին իրենց ազդեցության տակ են պահում միլլիոնավոր հետամնաց կանանց:

Այսպիսով բուրժուազիան «Կարմիր Խաչի» միջոցով իրեն համար ստեղծում է հուսալի սանիտարական զորասյուներ:

**15. Կոմկուսակցությունների և զանազան մասսայական կազմակերպությունների խնդիրները.**

Մերկացնել թշնամական կանանց կազմակերպությունների գործունեյությունն ու նրանց դասակարգային եյությունը:

Մոբիլիզացիայի յենթարկել միլլիոնավոր աշխատավոր կանանց կոմիտեների ղեկավարությամբ դեպի դասակարգային պայքարի ընդհանուր ճակատը:

Ցույց տալ ամբողջ աշխարհի աշխատավոր կանանց՝ Խորհրդային Միության օրինակով, վոր միայն հեղափոխական—դասակարգային պայքարում նրանք յելք կգտնեն ճգնաժամից, կապիտալիստական սիստեմի շահագործումից և աղետներից:

ԽՍՀՄ մեջ կանանց հետ տարած աշխատանքների հաջողություններն ու նվաճումները դրական օրինակ են Արևմուտքի բանվորուհիների ու գեղջկուհիների համար:

Կապիտալիստական յերկրների պրոլետար կանանց միլիոնավոր մասսաները պետք է մի շարքի կանգնեն իրենց հարվածային բրիգադի՝ ԽՍՀՄ բանվորուհիների հետ:

միջազգես դաշ զորակոչի և ենթարկվել ռազմական օրենքներին:

Այսպիսով բուրժուազիան «Կարմիր Խաչի» միջոցով ստեղծում է իրեն համար հուսալի սանիտարական զորասյուներ:

14. Բանվորուհու դերն արտադրությունում ու դասակարգային մարտերում աճում է տարեցտարի.

Կապիտալիստական երկրի արտադրության մեջ բանվորուհին գրավում է նշանավոր տեղ: Այսպես օրինակ՝ Գերմանիայում՝ 40% Ֆրանսիայում՝ 42%, Անգլիայում՝ 28%, Լեհաստանում, Ֆինլանդիայում, Ավստրիայում՝ ավելի քան 30 տոկոս, Արևելքում՝ ավելի քան 50 տոկոս:

Կապիտալիստական ռացիոնալացումը պարզեցրել է աշխատանքը և հնարավորություն է տվել բանվորական վորակյալ ուժը փոխարինելու կանանց ու երեխաների վոչ վորակյալ աժան ուժով:

Կապիտալիստական վոչ մի երկրում բանվորուհին հավասար աշխատավարձ չի ստանում բանվորի հետ կատարած հավասար աշխատանքի համար—նա ստանում է բանվորի աշխատավարձի մի մասը միայն և ավելի պակաս սոցապահովագրություն:

Այդ պատճառով համաշխարհային տնտեսական ճգնաժամն ավելի մեծ հարված է հասցնում բանվորուհուն:

Չնայած նրան, վոր բանվորուհիներն իրենց մասսայով հանդիսանում են բանվոր դասակարգի ամենից հետամնաց, չկազմակերպված ջոկատը,—բայց ավելի ու ավելի ուժեղացող հրեշավոր շահագործումը և բանվոր դասակարգի դեմ կապիտալիստների գործած ճնշումը հրամայողաբար հրում է բանվորուհուն դեպի պայքար:

Այդ պայքարը հաճախ անցնում է տարերայնորեն, անկազմակերպ: Բայց հենց պայքարում բանվորուհիները ցուցաբերում են մարտական բարձր պատրաստակամություն, ակտիվություն, անձնազոհություն:

Պայքարում—նրանք վարժվում են տարբերել իրենց բարեկամներին թշնամիներից: Բանվորուհիներն ավելի



ու ավելի հաճախ են մտնում կոմկուսակցությունների ու կարմիր արհմիությունների շարքերը:

Բուրժուազիան լարում է իր բոլոր ուժերը, վորպեսզի կտրի բանվորուհիներին և աշխատավոր կանանց պրոլետարիատի ընդհանուր դասակարգային պայքարից, օգտագործի նրանց իր նպատակների համար:

Այդ պատճառով է ահա, վոր այդչափ յեռանդով աշխատում են կանանց մեջ ֆաշիստական սոցիալ-դեմոկրատական, պացիֆիստական ու քրիստոնեյական կազմակերպությունները:

Նրանք անց են կացնում հազարավոր ժողովներ, հրատարակում են հազարավոր ամսագրեր, գրքույկներ, զրպարտելով կոմունիզմը: Նրանք տակավին իրենց ազդեցության տակ են պահում միլիոնավոր հետամնաց կանանց:

Այսպիսով բուրժուազիան «Կարմիր Խաչի» միջոցով իրեն համար ստեղծում է հուսալի սանիտարական զորասյուներ:

15. Կոմկուսակցությունների և տնտազան մասսայական նազմակերպությունների խնդիրները.

Մերկացնել թշնամական կանանց կազմակերպությունների գործունեությունն ու նրանց դասակարգային էությունը:

Մոբիլիզացիայի ենթարկել միլիոնավոր աշխատավոր կանանց կոմիտեների ղեկավարությամբ դեպի դասակարգային պայքարի ընդհանուր ճակատը:

Ցույց տալ ամբողջ աշխարհի աշխատավոր կանանց Խորհրդային Միության օրինակով, վոր միայն հեղափոխական—դասակարգային պայքարում նրանք ելք կգտնեն ճնշումից, կապիտալիստական սիստեմի շահագործումից և աղետներից:

ԽՍՀՄ մեջ կանանց հետ տարած աշխատանքների հաջողություններն ու նվաճումները դրավոր օրինակ են Արևմուտքի բանվորուհիների ու գեղջկուհիների համար:

Կապիտալիստական յերկրների պրոլետար կանանց միլիոնավոր մասսաները պետք է մի շարքի կանգնեն իրենց հարվածային բրիգադի՝ ԽՍՀՄ բանվորուհիների հետ:

# ԲԱՆԱՁԵՎ.

## ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ.

1. Համկոմկուսի (բ) ղեկավարությամբ նրա լենինյան ազգային քաղաքականության հիման վրա, ազգային հանրապետություններն ու ազգային մարզերը հսկայական հաջողություններ են ձեռք բերել սոցիալիստական շինարարության գործում: Վիթխարիորեն աճել են նրանց՝ արտադրական ուժերը: Չափազանց արագ աճում է ազգային պրոլետարիատը, և դրա թըվում կին պրոլետարիատի թվական քանակը: Ազգային հանրապետություններում ու ազգային մարզերում չափազանց մեծ նվաճումներ կան գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում: Բոլշևիկյան տեմպերով իրականում կենսագործվում է հետամնաց ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի տնտեսական անհավասարության վերացումը: Բացառիկ ձևով նշանակալից են ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի նվաճումները կուլտուրական շինարարության ասպարեզում:

Սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում վիթխարի հաջողությունները ձեռք են բերված ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի բանվոր դասակարգի, կոլխոզնիկների ու աշխատավորների լայն խավերի ակտիվության ու մասնակցության չտեսնված աճման հիման վրա, վորոնք նորանոր ցուցաբերում են սոցիալիզմի շինարարության ու Խորհրդային Միության պաշտպանունակության ամրացման գործում:

Այդ ակտիվության արտահայտություններից մեկն է հանդիսանում վերջին շրջանում Պաջը-Ավիաքիմի շարքերի ու աշխատանքի զգալի աճումը ազգային հանրապետություններում ու ազգային մարզերում (Ուկրային, Բելոռուսիա, Ղազախստան, Կիրգիզստան և այլն):

Չնայած Պաջը-Ավիաքիմի աշխատանքի այդ աճման՝ ազգային հանրապետություններից ու ազգային



մարզերից մի քանիսում, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների մեջ, ինչպես նկատվել է՝ ԽՍՀՄ Պաջը-Ավիաքիմի Կենտրոնական Խորհրդի հուլիսյան պլենումը շարունակում է զգալիորեն յետ մնալ Ընկերության առաջադրած ընդհանուր պահանջներից ու խնդիրներից:

Ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի մեծամասնության մեջ աշխատանքի առանձնապես յետ մնացող բնագավառը հանդիսանում է աշխատավոր կանանց մեջ տարվող Պաջը-Ավիաքիմի աշխատանքը:

Չնայած առանձին ազգային հանրապետություններում ու ազգային մարզերում այդ բնագավառում յեղած վորոշ հառաջադիմության (Հյուսիսային Կովկաս, Դաղստան, Կիրգիզստան և այլն), բայց և այնպես, վորպես կանոն, տակավին թույլ է ազգային աշխատավոր կանանց մեջ տարվող աշխատանքը:

Աշխատավոր ազգ.-կանանց հետ տարվող Պաջը-Ավիաքիմի աշխատանքի թուլության հիմնական պատճառները հանդիսանում են.

ա) Ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի Պաջը-Ավիաքիմի կազմակերպությունների մեծամասնության անբավարար ուշադրությունը դեպի աշխատավոր ազգ.-կանանց հետ տարվող աշխատանքը, իսկ մի շարք դեպքերում նաև այդ աշխատանքի թերագնահատությունը, վորը հասնում է ոպորտունիզմի:

բ) Կազմակերպությունների մեծամասնության մեջ բացակայում է սիստեմատիկ աշխատանքը՝ պաջավիաքիմյան աշխատանքում յեղած ազգ.-կանանց կադրերի հայտաբերման և ամրացման նկատմամբ և անբավարար է ուշադրությունը դեպի այդ կանանց աճեցումը, պատրաստությունն ու առաջ քաշումը:

գ) Թույլ է Պաջը-Ավիաքիմի մասսայական աշխատանքը աշխատավոր ազգ.-կանանց մեջ և ամեն անգամ չկա հմուտ մոտեցում դեպի ավելի հետամնաց խմբակները. Թույլ է դիֆերենցիացիան աշխատավոր ազգ.-կանանց տարբեր կատեգորիաների մոտեցման նկատմամբ:

դ) Չափազանց թույլ է, իսկ յերբեմն մինչև իսկ

լրիվին բացակայում է Պաջը-Ավիաքիմի աշխատանքը աշխատավոր ազգ.-կանանց մեջ գյուղում:

ե) Թույլ է ծավալված Պաջը-Ավիաքիմի աշխատանքը կանանց ակումբների, դելկանների տների և այլ հիմնարկների գծով:

3. Այն վիթխարի խնդիրները, որ կանգնած են Ընկերության առաջ՝ իմպերիալիստների ԽՍՀՄ դեմ ռազմական ինտերվենցիայի սպառնալիքի աճման և սոցիալիստական շինարարության վիթխարի հաջողությունների հետևանքով, պահանջում են վճռական բեկում կատարել աշխատավոր ազգ.-կանանց մեջ տարվող Պաջը-Ավիաքիմի աշխատանքի բնագավառում: Ազգային հանրապետությունների բանվորների ու կոլխոզնիկների կադրերի արագ աճումը, նրանց կուլտուրական-քաղաքական շինարարության ու յերկրի պաշտպանության գործում,-այս բոլորը չափազանց նպաստավոր նախադրյալներ են ստեղծում ամենակարճ ժամանակամիջոցում այդ բեկումն ապահովելու համար:

4. Պաջը-Ավիաքիմը հանդիսանում է հաղորդիչ փոկերից մեկը կուսակցությունից դեպի աշխատավորների լայն խավերը. նա մի կազմակերպություն է, վորը ներգրավում է աշխատավորների միլիոնավոր մասսաներին դեպի սոցիալիստական շինարարությունն ու յերկրի պաշտպանությունը: Պաջը-Ավիաքիմի այդ դերը պետք է չեշտվի նաև աշխատավոր ազգ.-կանանց նկատմամբ, վորոնց համար մեր Ընկերությունը պետք է հանդիսանա հասարակայնության և ինտերնացիոնալ դաստիարակության դպրոց, վորը մոբիլիզացիայի յե յենթարկում նրանց ակտիվությունը՝ սոցիալիստական շինարարության ու Խորհրդային Միության պաշտպանության աջակցելու գործում: Այդ պարտավորեցնում է ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի Պաջը-Ավիաքիմի բոլոր կազմակերպություններին հատուկ ուշադրություն նվիրել աշխատավոր ազգ.-կանանց մեջ տարվող աշխատանքներին:

5. Ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի տնտեսական, քաղաքական ու կուլտուր-կենցաղային պայմանների չափազանց մեծ բազմազանու-



թյունը պահանջում են աշխատավոր ազգ.-կանանց մեջ տարվող Պաջը-Ավիաքիմի աշխատանքում մեծ խնամքով հաշվի առնել բոլոր այդ պայմանները և դիֆերենցիալ մոտեցում ցույց տալ թե՛ դեպի առանձին ազգությունները և թե դեպի նրանց առանձին կատեգորիաները (բանվորուհիներ, կոլխոզուհիներ, չքավոր միջակ մենատնտեսների և այլն):

Այս բոլոր առանձնահատկությունների ու պայմանների հաշվառումն առանձնապես անհրաժեշտ է Խորհրդային Արևելքի ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի նկատմամբ (Անդրկովկաս, Միջին Ասիա և այլն):

Դեպի աշխատավոր ազգ.-կանանց առանձին կատեգորիաները մոտեցման ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալով.

ա) Կուլտուր-քաղաքական տեսակետից առաջավոր ազգային ռայոնների արդյունաբերական բանվորուհիների ու կոլխոզուհիների մեջ տարվող Պաջը-Ավիաքիմի աշխատանքը բովանդակության ձևերի ու մեթոդների տեսակետից պետք է հիմնականում կառուցվի այնպես, ինչպես նա Ընկերության կողմից աշխատանքը տարվում է ԽՍՀՄ այլ ռայոնների բանվորուհիների ու կոլխոզուհիների հետ:

բ) Կուլտուր-քաղաքական տեսակետից հետամնաց ազգային ռայոնների ազգ.-կոլխոզուհիների հետ տարվող Պաջը-Ավիաքիմի աշխատանքը պետք է կառուցվի՝ նրանց մեջ ագիտմասսայական աշխատանքի ծավալման և նրանց՝ Ընկերության գործնական կազմակերպությունները ներգրավման հիման վրա, առաջին հերթին աջակցելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանն ու քիմիացմանը, պայքարելով գյուղատնտեսության վնասատուների դեմ և աստիճանաբար ներգրավելով նրանց անմիջորեն ռազմական-գործնական աշխատանքին:

գ) Մենատնտեսներ չքավորուհիների ու միջակ գեղջկուհիների և տան տնտեսուհիների հետ Պաջը-Ավիաքիմի աշխատանքը, վորը տարվում է վոչ «փակ» կենցաղային պայմաններում, բայց տակավին հասարակական կյան-

քին չներգրավվածների հետ, պետք է կառուցվի այնպես, որ շեշտը դրվի Պաջը-Ավխաքիմի խաղաղ աշխատանքի վրա և միայն բացատրական աշխատանք տանելով այն մասին, որ անհրաժեշտ է աշխատավոր կանանց պատրաստել պաշտպանությանը, հարկավոր է նրանց աստիճանաբար ներգրավել խմբակների, ռազմական գիտելիքների խմբերի աշխատանքին և այլն:

դ) Տակավին չզգաստացրված, փակ կյանք վարող ազգ.-կանանց հետ տարվող աշխատանքը պահանջում է առավել զգույշ ու հմուտ մոտեցում, որպեսզի ռազմականացման աշխատանքից չվախենա ազգ.-կինը: Աշխատանքի գործնական ձևերը մոտավորապես նույնն են, ինչ և նախորդ կատեգորիայի կանանց հետ («գ»):

6. Աշխատավոր ազգ.-կանանց մեջ Պաջը-Ավխաքիմի աշխատանքի ծավալման և անցկացման ժամանակ անհրաժեշտ է առաջին հերթին նկատի ունենալ այդ աշխատանքով կոմունիստ, կոմյերիտական կանանց, բանվորուհիների ու կոլխոզուհիների ընդգրկումը:

Աշխատավոր ազգ.-կանանց հետ տարվող Պաջը-Ավխաքիմի ամբողջ աշխատանքում հիմնական հենակետեր պետք է լինեն ձեռնարկությունները, խորհտնտեսությունները, Մեքենատրակտորային կայաններն ու կոլտնտեսությունները, ինչպես նաև կանանց ակումբները: Այդ ամբողջ աշխատանքում Պաջը-Ավխաքիմի կազմակերպությունները պետք է ապահովվեն դասակարգային ստույգ գիծ, մանավանդ գյուղում, ժամանակին արձագանքելով և անխնա հակահարված տալով դասակարգային թշնամիների (մոլլաների, բայերի, վարդապետների, կուլակների և այլն) բոլոր փորձերին, երբ վերջիններս կսերմանեն աշխատանքի խզման ու կազմալուծման համար սուտ ու պրովոկացիոն լուրեր:

7. Աշխատավոր ազգ.-կանանց մեջ Պաջը-Ավխաքիմի աշխատանքի ծավալման գործում առանձնապես լուրջ դեր է պատկանում ագիտմասսայական աշխատանքին: Այդ աշխատանքի վրա պետք է առաջին հերթին ուշադրություն դարձնեն Ընկերության կազմակերպությունները, և այդ աշխատանքի ծավալման համար



պետք է լայն չափով օգտագործվեն ագիտացիայի ու պրոպագանդի բոլոր ձևերն ու մեթոդները:

Այդ բնագավառում առաջին հերթին անհրաժեշտ է.

ա) Հրավիրել ազգ.-կանանց մասսայական ժողովներ, անցկացնել զրույցներ, զեկուցումներ և այլն մայրենի լեզվով:

բ) Լայնորեն օգտագործել ազգ. կին սովորողներին ու բանվորուհիներին, որոնք արձակուրդի կամ պրակտիկայի յեն գնում գյուղը, հանձնարարելով նրանց մայրենի լեզվով ազգ.-կանանց մեջ անցկացնել ագիտմասսայական աշխատանք:

գ) Միջոցներ ձեռք առնել ամենաարագ կերպով հրատարակելու ազգային լեզուներով մասսայական գրականություն ազգ.-կանանց համար՝ յերկրի պաշտպանության, Կարմիր բանակի դերի, Պաջը—Ավխաքիմի նշանակության ու խնդիրների, յերկրի ավիացման, ՀՕՊ-ի մասին և այլն:

դ) Ապահովել բոլոր այդ հարցերի լուսաբանումն ազգային պարբերական մամուլում, մանավանդ ազգային կանանց ամսագրերում:

ե) Լայնորեն օգտագործել աշխատավոր ազգ.-կանանց ագիտմասսայական աշխատանքի համար ռադիոն ու կինոն:

8. Աշխատավոր ազգ.-կանանց մեջ տարվող ագիտմասսայական ամբողջ աշխատանքի ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն նվիրել ԽՍՀՄ միջազգային դրությանը, կուսակցության ազգային քաղաքականությանը, ազգային հանրապետություններում ու ազգային մարզերում սոցիալիստական շինարարության նվաճումների, յերկրի պաշտպանության ամրացման գործում՝ նրա դերի, ԽՍՀՄ դեմ իմպերիալիստների զինված ինտերվենցիայի վտանգի աճման, խաղաղության քաղաքականության, որ անշեղորեն կիրառում են կուսակցությունն ու կառավարությունը, Կարմիր բանակի դերի ու նշանակության և Պաջը-Ավխաքիմի խնդիրների պարզաբանմանը:

Տարվող ագիտ-մասսայական ամբողջ աշխատանքը պետք է աջակցի աշխատավոր կանանց լայն խավերի ին-

տերնացիոնալ դաստիարակությանը, մոբիլիզացիայի յենթարկի նրանց՝ իրացնելու ընկ. Ստալինի պատմական 6 պայմանները, պայքարելու արդֆինպլանի համար, կոլխոզների կազմակերպչական— տնտեսական ամրացման համար, տնտես.—քաղաքական կամպանիայի հաջող կիրառման համար, և այդ աշխատանքի արդյունքը պետք է լինի աշխատավոր ագդ.—կանանց լայն ներգրավումը Պաջը-Ավիաքիմի շարքեր:

Պետք է ձեռք առնել բոլոր միջոցները՝ կատարելու Պաջը-Ավիաքիմի այն կոնտրոլ թվերը, վոր տրված են 1932 թվի համար՝ աշխատավոր ագդ.—կանանց Պաջը-Ավիաքիմի շարքերը ներգրավելու և գործնական աշխատանքով նրանց ընդգրկելու նկատմամբ:

9. Աշխատավոր ագդ.—կանանց մեջ Պաջը-Ավիաքիմի աշխատանքի ծավալման գործում կարևորագույն տեղ է հանդիսանում կադրերի պրոբլեմը: Այդ պրոբլեմը պետք է գտնվի ազգային հանրապետությունների մարզերի Պաջը-Ավիաքիմի բոլոր կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Անհրաժեշտ է անմիջապես ծավալել դասընթացների լայն ցանց ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ռայոնական, հանրապետական ու մարզային կենտրոններում՝ պատրաստելու համար աշխատավոր ագդ.—կանանց և առաջին հերթին՝ բանվորուհիների ու կոլխոզուհիների թվից ակտիվ, լիովին ապահովելով այդ դասընթացներն անհրաժեշտ վորակյալ ուժերով ու միջոցներով. անհրաժեշտ է լայն չափով գործադրել շարժական դասընթացներ:

10. Անհրաժեշտ է ամենամոտ ժամանակամիջոցում ամենալուրջ ուշադրությունը դարձնել ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի Պաջը-Ավիաքիմի կազմակերպությունների բոլոր ողակներում կինսեկտորների ծավալման ու ամրացման վրա: Բոլոր այդ սեկտորների գլուխ պետք է անցնեն Պաջը-Ավիաքիմի նախագահության կամ Խորհրդի անդամ ագդ.—կանանց թվից: Այդ սեկտորների շուրջը պետք է համախմբվեն ակտիվ լայն կադրեր, առաջին հերթին՝ ագդ. կոլխոզուհիներից ու բանվորուհիներից:



Կինսեկտորի սիստեմատիկ ու կանոնավոր աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ է բոլոր ազգային հանրապետություններում ու ազգային մարզերում և Պաջը-Ավիաքիմի կարևորագույն ռայոնական խորհուրդներում մտցնել կինսեկտորների ղեկավարների հաստիքավոր պաշտոններ, անպայման ագդ. կանանց կամ տեղական ազգային լեզուներին տիրապետող կանանց թվից: Դրա հետ միասին անհրաժեշտ է ապահովել կինսեկտորների աշխատանքի ղեկավարությունն ու նրանց աշխատանքների ոգնությունը Պաջը-Ավիաքիմի նախագահությունների ու խորհուրդների քարտուղարությունների կողմից:

Պաջը-Ավիաքիմի խորհուրդների կինսեկտորներն այդ ամբողջ աշխատանքը պետք է տանեն կուսկոմների կինսեկտորների ընդհանուր ղեկավարությամբ և սերտորեն համաձայնեցնելով կոմյերիտական ու արհեստակցական կազմակերպությունների աշխատանքի հետ, ձեռք բերելով նրանց կողմից պատշաճ ոգնություն ու աջակցություն:

11. Աշխատավոր ագդ.—կանանց հետ տարվող աշխատանքի բնագավառում Պաջը-Ավիաքիմի կարևորագույն խնդիրներից մեկն է բանվորուհի ու կոլխոզուհիների թվից ագդ.—ակտիվ կանանց աճեցման ու առաջքաշման աշխատանքը, այն կանանց, վորոնք ցուցաբերել են իրենց գործնական ղեկավար աշխատանքում (Պաջը-Ավիաքիմի նախագահությունների կազմի մեջ ու վորպես Խորհրդի անդամ, սեկտորների ղեկավարներ, Ընկերության կազմակերպության պատասխանատու քարտուղար, հրահանգիչ և այլն):

12. Այն ռայոններում, վորտեղ ագդ.—կանանց մեջ հասարակական ու կուլտուր-լուսավորական աշխատանք է տարվում կանանց ակումբներում, անկյուններում, դեկխանների տներում և այլն, անհրաժեշտ է լայն չափով այդ հիմնարկությունները՝ ագդ. կանանց մեջ Պաջը-Ավիաքիմի աշխատանքի կազմակերպման և անցկացման համար, ստեղծելով Պաջը-Ավիաքիմի անկյուններ, խմբակներ ((հրաձգային, քիմիական ՀՈՊ և այլն), ակտիվ խմբակներ և այլն: Այդ քաղլուսհիմնարկների

աշխատանքների պլանի մեջ պետք է անպայման մտցնել Պաջը-Ավիաքիմի աշխատանքի հարցեր:

Հնարավոր է, վորպես ժամանակավոր միջոց, ազգային ամենահետամնաց ռայոններում կազմակերպել կանանց ակումբներին կից Պաջը-Ավիաքիմի կանանց հատուկ բջիջներ: Կանանց ակումբները, անկյունները, դեկխանկաների տները և այլն պետք է դառնան ազգ.—կանանց մեջ Պաջը-Ավիաքիմի աշխատանքներում հենակետեր ու ցուցադրական կետեր: Պաջը-Ավիաքիմի խորհուրդների կինսեկտորները պետք է ապահովեն այդ հենակետերի աշխատանքի մշտական ու անմիջական ղեկավարությունը:

Զափազանց կարևոր է ոգտագործել Պաջը-Ավիաքիմի աշխատանքի համար ազգ.-կանանց պատգամավորական ժողովները: Այդ ժողովներին կից պետք է ստեղծեն Պաջը-Ավիաքիմի ակտիվի խմբակներ և ամենալուրջ ուշադրություն նվիրել այդ ակտիվի պատրաստությանը:

13. Աշխատավոր ազգ.-կանանց մեջ տարվող աշխատանքի բնագավառում բացառիկ կարևոր ու պատասխանատու խնդիրներ են ընկնում սահմանամերձ ռայոնների և ոդային-քիմիական հարձակման տեսակետից սպառնալից շերտի Պաջը-Ավիաքիմի կազմակերպության վրա: Ազգ.-կանանց Ընկերության շարքերը, նրա գործնական աշխատանքներին ներգրավելուն այստեղ պետք է նվիրվի ամենալուրջ ուշադրություն:

Զափազանց անհրաժեշտ է այս ռայոններում ծավալել լայն աշխատանք՝ վերացնելու համար աշխատավոր ազգ. կանանց մեջ հակաոդային անգրագիտությունը և ծանոթացնելու համար ժամանակակից տեխնիկայի հետ, կռվի միջոցների ու յեղանակների հետ և Կարմիր բանակին աջակցություն ցույց տալու նկատառմամբ աշխատավոր կանանց խնդիրների ու պարտականությունների հետ:

14. Պաջը-Ավիաքիմի բոլոր կազմակերպություններում պետք է լուրջ ուշադրություն նվիրել ազգային փոքրամասնությունների թվից աշխատավոր կանանց մեջ տարվող աշխատանքին: Անհրաժեշտ է Ընկերու-



թյունների կազմակերպություններին կից կանանց սեկտորների ամբողջ աշխատանքում հաշվի առնել այդ խնդիրը, ապահովելով այդ ազգային փոքրամասնությունների աշխատավոր կանանցից ակտիվ ստեղծելը, գործնական աշխատանքով նրանց լայն ընդգրկումը և այլն:

15. Աշխատավոր ազգ.-կանանց մեջ տարվող աշխատանքների բնագավառում Ընկերության առաջ դրված վիթխարի խնդիրների համար անհրաժեշտ են միջոցներ, վորոնք ապահովեյին նախատեսված բոլոր միջոցառումների կիրառումը, մանավանդ՝ ակտիվի կադրերի պատրաստման վերաբերյալ: Դրա հետ միասին անհրաժեշտ համարել ԽՍՀՄ Պաջը-Ավիաքիմի՝ Միության կենտխորհրդի գծով 1932 թվի բյուջեյից հատկացնել, վորպես դոտացիա, ազգ.-հանրապետությունների ու ազգային մարզերի Պաջը-Ավիաքիմ կազմակերպություններին 50,000 ռուբլի, առաջին հերթին թույլ կազմակերպություններին ծավալելու և անցկացնելու համար աշխատավոր ազգ.-կանանց մեջ աշխատանքը:

16. Քաղաքական սուր գիծը, վճռական պայքարը ոպորտունիզմի դեմ ու կուսակցության ազգային քաղաքականությունից յեղած թեքումների դեմ, մեծապետական շովինիզմի, վորպես տվյալ ետապում գլխավոր վտանգի, տեղական շովինիզմի ու դեպի դրանց ցույց տված հաշտվողականության դեմ, սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության լայն կիրառումը, ամբողջ աշխատանքը նոր ձևով վերակառուցումը՝ ընկ. Ստալինի 6 պայմանների ու ԽՍՀՄ Պաջը-Ավիաքիմի Միության Կենտրոնական Խորհրդի հուլիսյան պլենումի վորոշումների հիման վրա,— ահա այն կարևորագույն պայմանները, վորոնք ապահովում են Ընկերության առաջ ծառացող խնդիրների հաջող լուծումն աշխատավոր ազգ.-կանանց հետ տարվող աշխատանքի բնագավառում:



2242—3

# ԲԱՆԱՁԵՎ.

## ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՊԱՋՐ-ԱՎԻԱՔԻՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

1. ԽՍՀՄ թևակոխել է սոցիալիզմի շրջանը: Ամենայն հետևողականությամբ ու հաստատությամբ շարունակվում է ծավալուն սոցիալիստական հարձակումն ամբողջ ճակատով: Ընկ. Ստալինի 6 պայմանների դրոշի տակ մոբիլիզացիայի յեն յենթարկված միլիոնավոր մասսաները՝ հնգամյակի 3-րդ վճռական տարում սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման վիթխարի աշխատանքի համար: Միլիոնավոր աշխատավորների ջանքերով լենինյան կուսակցության ու ընկ. Ստալինի գլխավորությամբ Լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ մեծ հաջողությամբ իրացվում է՝ «տեխնիկական-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու» լոզունգը:

Միաժամանակ կապիտալիստական աշխարհի դրությունը բնութագրվում է հետևյալ ձևով, խիստ ձևով սրվել են կապիտալիստական սիստեմի հակասությունները, ծավալվում ու խորանում է համաշխարհային տնտեսական ճգնաժամը, աճում է հեղափոխական շարժումը, ուժեղանում է պայքարն իմպերիալիստական յերկրների միջև և խստորեն մեծանում է իմպերիալիստական նոր պատերազմների սպառնալիքը:

ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի շինարարության չտեսնված հաջողությունները, Խորհրդային Միության վիթխարի հեղափոխականացնող դերը, ԽՍՀՄ նշանակությունը «վորպես նոր իմպերիալիստական պատերազմների գլխավոր պատնեշի» ուժեղացրին իմպերիալիստների կողմից ԽՍՀՄ դեմ ռազմական ինտերվենցիայի սպառնալիքը:

Խորհրդային Միության դեմ պրովոկացիոն հալածանքը, վորը ծավալվում է կապիտալիստական բոլոր յերկրներում բոլոր յերանգների սոցիալ ֆաշիստների ամենաակտիվ մասնակցությամբ Մանջուրիայում տեղի ունեցող անցքերի առթիվ, վկայում են այն մասին, վոր



միջազգային իմպերիալիզմի կողմից խորհուրդների յերկրի դեմ հարձակման սպառնալիքն ավելի ռեալ է, քան յերբևէ:

Այսպիսի պարագայում բարձրանում են պահանջները խորհրդային ամբողջ հասարակայնության նկատմամբ դեպի սոցիալիստական շինարարության ու յերկրի պաշտպանության աջակցության գործը: Առանձնապես աճել է խորհրդային հասարակայնության առաջավոր ջոկատի՝ Պաջր-Ավիաքիմի դերը:

## ՊԱՋՐ-ԱՎԻԱՔԻՄԻ ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

2. 2-րդ Համամիութենական համագումարից հետո յեղած ամբողջ ժամանակամիջոցում Պաջր-Ավիաքիմը թևակոխել է իր ամբողջ գործունեյության վերելքի և ամրացման շրջանը:

Վորպես Ընկերության աշխատանքում ձեռք բերած նվաճում, ԽՍՀՄ Պաջր-Ավիաքիմի Կենտրոնական խորհրդի հուլիսյան պլենումը նշեց անդամակցական մասսաների աշխատանքում ու ակտիվության մեջ քաղաքական սրվածության վերելք, հասարակայնության, մասսայականության, ինքնագործունեության և սոց. մրցակցության զարգացում. հաջող մասնակցություն միշարք կարևորագույն տնտեսական-քաղաքական կամպանիաներում. Պաջր-Ավիաքիմի հնգամյակի կոնտրոլ թվերի հաջող կատարում. ղեկավարության պլանայնության և օպերատիվ ունակությունների ամրացում: Պաշտպանության տների, վարժակայանների, դպրոցների, կայարանների, հրաձգարանների բարձրացրած բազայով գործնական աշխատանքի զգալի աճում. ավիացիոն աշխատանքի նվաճումներ,-ռազմական պատրաստության վորակի բարձրացում. նախնական հաջողություններ ռազմական տեխնիկայի միջոցների տիրապետելու ասպարեզում և այլն:

3. Կենտրոնական Խորհրդի հուլիսյան պլենումն իր աշխատանքներն անցկացրեց այն նոր խնդիրների հաշվառման նշանաբանի տակ, վոր ծառայում են Ընկերության առաջ՝ կուսակցությունից դեպի մասսաները հաղորդիչ փոկերի ընդհանուր սիստեմում,

Խորհրդային յերկրի պաշտպանության ամրացման ու սոցիալիստական շինարարության աջակցության սպառնում: Պլենումի վորոշումները 2-րդ համամիութենական համագումարից հետո Պաջը-Ավիաքիմի գործունեյության մեջ վորոշում են արտակարգ կարեվոր մի նոր էտապ:

Աշխատանքի վերակառուցումը ամենահիմնական խնդիրն է ընկերության աշխատանքի հետագա ծավալումն ու հաջողությունն ապահովելու համար: Աշխատանքի վերակառուցման հիմքերն են. ա) աշխատանքի քաղաքական ակտիվացումը. բ) անմիջական ռազմական-գործնական աշխատանքի շաղկապումն սոցիալիստական շինարարության ցույց տված եվ ավելի ակտիվ մասնակցության հետ. գ) վճռական շրջադարձը յերեսով դեպի տեխնիկայի և առաջին հերթին ռազմական տեխնիկայի տիրապետման խնդիրները. դ) ստորին բջիջը աշխատանքի ու ղեկավարության վերակառուցման հարվածային բնագավառն է. յե) նոր ձևով աշխատել գյուղի սոցիալիստական սեկտորում. զ) ղեկավարության նոր ձևեր ու մեթոդներ. է) ղեկավար մարմինների կազմակերպչական վերակառուցումը. կադրերի ընտրանքը, դաստիարակությունն ու առաջ քաշումը, հասարակայնության առավելագույն ներգրավումը դեպի ղեկավարությունը և այլն:

4. Դրա հետ միասին ԽՍՀՄ Պաջը-Ավիաքիմի Միության կենտրոնական խորհրդի հուլիսյան պլենումն արձանագրում է ընկերության աշխատանքներում յեղած թերություններն ու արգելակները, վորոնց թվում և առաջին հերթին հետևյալ թերությունները. մի քանի մարզային կազմակերպություններում հայտաբերված են դասակարգային աչալրջության բթացման, քաղաքական անողնաշարության, գործամոլության, գործնականում աջ օպորտունիզմի արտահայտության, ընկերության շարքերի դասակարգային աղտեղման ( засоренность ) փաստեր և մինչև իսկ Պաջը-Ավիաքիմի կազմակերպության շարքերը հակահեղափոխական ու վնասարարական նպատակներով օգտագործելու փորձեր (Ուկրայինա և



Հյուսիսային Կովկաս). մի շարք կազմակերպություններ ցուցաբերեցին անկարողություն՝ գլխավորելու մասսաների աճած ակտիվությունը և լայն հետաքրքրությունը դեպի պաշտպանության աշխատանքները. տեղի ունեն անպատասխանատվություն, ինքնահոսի, աչքակապության և բյուրոկրատիզմի դեպքեր. բավարար չափով չեն կիրառում ինքնաքննադատությունը, սոցմրցակցության ու հարվածայնության մեթոդները. թույլ է հասարակական կարգապահությունը. յետ են մնում վերակառուցումից. անբավարար է պլանայնությունը, օպերատիվ ունակությունը, կատարման ստուգումը, ֆինանսական կարգապահությունը, հաշվառումը, մասսաների կազմակերպման ծանրության կենտրոնը չի փոխադրված լրիվ չափով դեպի ցեխը, օղակը, բրիգադն ու տեղամասը. թույլ է ուսուցման ամբողջ սիստեմում մարդկային կոնտինգենտների մշակման վորակը և մանավանդ անհանդուրժելի յե հետամնացությունը կանանց հետ տարվող Պաջը-Ավիաքիմի աշխատանքի բնագավառում:

## Կանանց հետ տարվող Պաջը-Ավիաքիմի աշխատանքի դրությունը.

5. Պաջը-Ավիաքիմի 2-րդ համամիութենական համագումարը, չեշտելով յերկրի պաշտպանության համար աշխատավոր կանանց պատրաստության նկատմամբ ընկերության աշխատանքի բացառիկ նշանակությունը, առաջադրեց Պաջը-Ավիաքիմի կազմակերպություններին այդ բնագավառում ստույգ ու պարզ խնդիրներ.—ծավալել ագիտմասսայական աշխատանքը, լայնորեն ընդգրկել աշխատավոր կանանց գործնական աշխատանքի բոլոր ձևերով, մանավանդ ռազմական պատրաստությամբ, հակաօդային պաշտպանության աշխատանքներով, ուժեղացնել կանանց հատուկ կադրերի (կապի դասընթացներ և այլն) պատրաստության տեմպերը, ավելի վճռականորեն առաջ քաշել ակտիվ կանանց ղեկավար աշխատանքի համար և այլն:

6. Ամփոփելով համագումարից հետո անցած մեկու-

վեց տարվա ընթացքում կանանց հետ տարած աշխատանքի արդյունքները, անհրաժեշտ է արձանագրել, որ համագումարի այդ դիրեկտիվների ճնշող մեծամասնությունը կատարված չէ:

Աշխատավոր կանանց հետ տարված աշխատանքի դրությունը հարկավոր է ավյալ մոմենտում անպայման համարել անբավարար, չնայած առանձին նվաճումներին, ինչպիսիք են՝ կանանց թվական վորոշ աճումը ընկերության կազմի մեջ (առ 1931 թվի հոկտեմբերի 1-ը ընկերության շարքերում կար 1,1 միլիոն կին, առ 1931 թվի հուլիսի 1-ը յեղել է 2,3 միլիոն կին—այսինքն՝ անդամների ընդհանուր թվի 20 %-ը), ավելացել է գործնական աշխատանքով նրանց ընդգրկումը (առ 1-ն հոկտեմբերի 1928 թվի ընկերության գործնական աշխատանքներով՝ դպրոցներով, դասընթացներով, խմբակներով, ջոկատներով և այլն ընդգրկված է յեղել 100 հազար կին, առ 1-ն հունվարի 1931 թվի՝ 400 հազար կին): Կանանց հետ մասսայական աշխատանքը տարվում է չափազանց թույլ, բավարար չէ կանանց ակտիվը, հնգամյակի կոնտրոլ թվերը կանանց հետ տարվելիք աշխատանքի վերաբերյալ կատարված չեն, չափազանց թույլ է ծավալված աշխատանքը կոլտնտեսություններում և այլն.—կանանց հետ, տեղ-տեղ վերացված են կանանց հետ տարվող աշխատանքի համար առանձնացված աշխատանքների հատուկ պաշտոնները, ընկերության ղեկավար մարմիններում կանանց թիվը քիչ է և այլն:

7. Դրա հիմնական պատճառներն հանդիսանում են.

ա) միանգամայն անբավարար ուշադրությունն ընկերության ղեկավար մարմինների կողմից դեպի կանանց հետ տարվող աշխատանքը.

2. Պաջր-Աժխաքիմի 2-րդ համամիութենական համագումարը, վորոշում ընդունելով Ընկերության բոլոր կազմակերպություններում,—բացառությամբ ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի,—կանանց սեկցիաների վերացման մասին, ամբողջ աշխատանքը հանձնեց Ընկերության ֆունկցիոնալ սեկցիաներին, պարտավորեցնելով նրանց ու Պաջր-Աժխաքիմի ղեկավար մարմիններին՝ նվիրել այդ աշխատանքին առավելագույն ուշադրություն, համարելով այդ աշխատանքը նրանց ամբողջ գործունեության անխզելի օրգանական մասը:



Սակայն վերացնելով կանանց սեկցիաները, Պաջր-Աժխաքիմի կազմակերպությունների մեծամասնությունը կանանց հետ տարվող աշխատանքի նկատմամբ չապահովեց պատշաճ ուշադրություն ու վերահսկողություն՝ Ընկերության բոլոր սեկտորների ու բաժինների գծով:

բ) Չկա կանանց զանազան կատեգորիաների հետ տարվող աշխատանքի մեթոդների ու ձևերի կոնկրետ դիֆերենցիացիա՝ համաձայն կանանց տարբեր տնտեսական ու կենցաղային պայմանների կուլտուրականության ակտիվության:

Բացակայում է կազմակերպությունների մեծամասնության կողմից սիստեմատիկ աշխատանքը՝ հայտաբերելու, ոգտագործելու և ամրացնելու Պաջր-Աժխաքիմի աշխատանքում կանանց հետ տարվող աշխատանքի կադրեր, անբավարար է ուշադրությունը դեպի նրանց աճեցումը, պատրաստությունն ու դաստիարակությունը:

գ) Թույլ է ծավալված մասսայական ռազմաքաղաքական աշխատանքն աշխատավոր կանանց մեջ, և չկա հմտություն՝ դրա համար ոգտագործելու Պաջր-Աժխաքիմի կանանց ընդհանուր ագիտմասսայական աշխատանքի հատուկ հենակետերի ցանցը (պաշտպանության տները, բանվորական ու կոլխոզային ակումբները, խրճիթ-ընթերցարանը, կանանց ակումբները և այլն):

դ) Բացակայում է վերադաս մարմինների վորոշումների կատարման ստուգումը, ինչպես նաև ինքնաստուգումը, անբավարար են կիրառվում ինքնաքննադատությունը, սոցմրցակցությունն ու հարվածայնությունը:

### Վերակառուցման հիմնական խնդիրները

8. Մեր յերկրի սոցիալական շինարարության բոլոր բնագավառներում բանվորուհիների ու կոլտնտեսուհիների ավելի ու ավելի աճող ակտիվությունն անկասկած նկատվում է նաև նրանց ռազմական պատրաստության

տապարիզում: Վերջին տարվա ընթացքում զգալիորեն աճել է աշխատավոր կանանց հետաքրքրությունը, ռազմական պատրաստության ու Պաշտ-Ավիաքիմի աշխատանքի հարցերը:

Պաշտ-Ավիաքիմի կազմակերպությունները պետք է կարողանան ժամանակին ամրացնել այդ աճող ակտիվությունը, ներգրավելով բանվորուհիներին, կոլտնտեսուհիներին ու բանվորների կանանց ընկերության գործնական աշխատանքներին:

Անհրաժեշտ է վճռականորեն վերջ տալ կանանց հետ տարվող աշխատանքի թերագնահատմանը Պաշտ-Ավիաքիմի մի շարք կազմակերպություններում, դրա հետ միասին ամենավճռական պայքար մղել դրա մեջ հանցավոր կազմակերպությունների պատասխանատու ղեկավարների դեմ:

9. ԽՍՀՄ Պաշտ-Ավիաքիմի Կենտրոնական Խորհրդի հունիսյան պլենումը, հաշվի առնելով կանանց հետ տարվող աշխատանքի հատուկ կարևորությունը՝ կապված Ընկերության ընդհանուր խնդիրների հետ, վորոշում է ընդունել կազմակերպչորեն ապահովել այդ աշխատանքը, ստեղծելով կազմակերպության բոլոր ստորինններում կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորներ:

Իրացնել պլենումի այդ վորոշումն ամենակարճ ժամանակամիջոցում, ստեղծել ամենուրեք՝ բջիջից սկսած մինչև ԽՍՀՄ Պաշտ-Ավիաքիմի կենտրոնական խորհուրդը՝ կանանց հետ տարվող աշխատանքի ամուր և աշխատունակ սեկտորներ,—ահա մեր Ընկերության բոլոր կազմակերպությունների մարտական խնդիրները: Այդ խնդրին առաջիկա ժամանակաշրջանում պետք է նվիրվի բացառիկ ուշադրություն:

Բջիջներում կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորները կազմակերպվում են ինքնուրույն. Պաշտ-Ավիաքիմի մարզային ու ռայոնական խորհուրդներում կինսեկտորները գոյություն ունեն ագիտմասսայական բաժինների կից: Կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորներ ստեղծելը վոչ մի դեպքում չի նշանակում, վոր մնացած բաժիններից ու սեկտորներից վերացվում է կա-



նանց հետ աշխատանք տանելու վորևէ պատասխանատվություն ու պարտականություն:

Կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորների դերն այն է, վոր նրանք լինեն այդ աշխատանքի առաջամարտիկը, դրդողն ու նախաձեռնողը, պլանայնացնեն աշխատանքը և հենվեն այդ աշխատանքն անցկացնելիս ամբողջ կազմակերպության ու բոլոր սեկտորների վրա: Կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորների շուրջը պետք է համախմբել ակտիվ կանանց կադրեր, ներգրավելով առաջին հերթին քաղաքացիական պատերազմին մասնակցող բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին, գլխավորելով նրանց Պաշտ-Ավիաքիմի նախագահությունների կամ խորհուրդների անդամ կանանցով: Աշխատավոր կանանց պաշտպանությունը պատրաստելու աշխատանքների սիստեմատիկ ու պլանային ղեկավարությունն իրագործելու նպատակով մտցնել հանրապետական, յերկրային, մարզային և ամենից խոշոր ռայոնական Պաշտ-Ավիաքիմի խորհուրդներին կից վարձատրվող և այլ աշխատանքից ազատ ղեկավարներ՝ կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորների համար:

10. Պաշտ-Ավիաքիմի կին ակտիվի գործնական պատրաստության նպատակով անհրաժեշտ է կանանց ավելի լայնորեն ներգրավել Պաշտ-Ավիաքիմի ակտիվի դասընթացները, ինչպես նաև կազմակերպել կինակտիվի հատուկ դասընթացներ, մասնավորապես գործադրելով շարժական դասընթացներ: Միաժամանակ անհրաժեշտ է հասնել նրան, վոր Պաշտ-Ավիաքիմի ակտիվը պատրաստվի արհմիության, լուսբաժնի, կանանց պատգամավորական ժողովներին կից քաղլուսդասընթացների կինկադրերի պատրաստության սիստեմի միջոցով, նրանց ծրագրերի մեջ մտցնելով անհրաժեշտ քանակով ժամեր՝ Պաշտ-Ավիաքիմի աշխատանքի համար: Գործնական աշխատանքի ամբողջ սիստեմը (ծանրաբեռնումը, անհատական պատասխանատվությունը, կատարման ստուգումը, հաշվառումը, պարզ առաջադրանքներից ավելի բարդերին անցնելը) պետք է հետապնդի կին ակտիվի վարի խավերի անընդհատ աճեցումը:

11. Աշխատավոր կանանց յերկրի պաշտպանությա-

տապարկվում: Վերջին տարիս ընթացքում զգալիորեն աճել է աշխատավոր կանանց հետաքրքրությունը, ռազմական պատրաստության ու Պաջը-Ավիաքիմի աշխատանքի հարցերը:

Պաջը-Ավիաքիմի կազմակերպությունները պետք է կարողանան ժամանակին ամրացնել այդ աճող ակտիվությունը, ներգրավելով բանվորուհիներին, կոլտնտեսուհիներին ու բանվորների կանանց ընկերության գործնական աշխատանքներին:

Անհրաժեշտ է վճռականորեն վերջ տալ կանանց հետ տարվող աշխատանքի թերագնահատմանը Պաջը-Ավիաքիմի մի շարք կազմակերպություններում, դրա հետ միասին ամենավճռական պայքար մղել դրա մեջ հանդիպող կազմակերպությունների պատասխանատու ղեկավարների դեմ:

9. ԽՍՀՄ Պաջը-Ավիաքիմի Կենտրոնական Խորհրդի հունիսյան պլենումը, հաշվի առնելով կանանց հետ տարվող աշխատանքի հատուկ կարևորությունը՝ կապված Ընկերության ընդհանուր խնդիրների հետ, վորոշում է ընդունել կազմակերպչորեն ապահովել այդ աշխատանքը, ստեղծելով կազմակերպության բոլոր ատյաններում կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորներ:

Իրացնել պլենումի այդ վորոշումն ամենակարճ ժամանակամիջոցում, ստեղծել ամենուրեք՝ բջիջից սկսած մինչև ԽՍՀՄ Պաջը-Ավիաքիմի կենտրոնական խորհուրդը՝ կանանց հետ տարվող աշխատանքի ամուր և աշխատունակ սեկտորներ,—ահա մեր Ընկերության բոլոր կազմակերպությունների մարտական խնդիրները: Այդ խնդրին առաջիկա ժամանակաշրջանում պետք է նվիրվի բացառիկ ուշադրություն:

Բջիջներում կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորները կազմակերպվում են ինքնուրույն. Պաջը-Ավիաքիմի մարզային ու ռայոնական խորհուրդներում կինսեկտորները գոյություն ունեն ագիտմասսայական բաժինների կից: Կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորներ ստեղծելը վոչ մի դեպքում չի նշանակում, վոր մնացած բաժիններից ու սեկտորներից վերացվում է կա-



նանց հետ աշխատանք տանելու վորևէ պատասխանատվություն ու պարտականություն:

Կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորների դերն այն է, վոր նրանք լինեն այդ աշխատանքի առաջամարտիկը, դրդողն ու նախաձեռնողը, պլանայնացնեն աշխատանքը և հենվեն այդ աշխատանքն անցկացնելիս ամբողջ կազմակերպության ու բոլոր սեկտորների վրա: Կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորների շուրջը պետք է համախմբել ակտիվ կանանց կադրեր, ներգրավելով առաջին հերթին քաղաքացիական պատերազմին մասնակցող բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին, գլխավորելով նրանց Պաջը-Ավիաքիմի նախագահությունների կամ խորհուրդների անդամ կանանցով: Աշխատավոր կանանց պաշտպանությունը պատրաստելու աշխատանքների սիստեմատիկ ու պլանային ղեկավարությունն իրագործելու նպատակով մտցնել հանրապետական, յերկրային, մարզային և ամենից խոշոր ռայոնական Պաջը-Ավիաքիմի խորհուրդներին կից վարձատրվող և այլ աշխատանքից ազատ ղեկավարներ՝ կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորների համար:

10. Պաջը-Ավիաքիմի կին ակտիվի գործնական պատրաստության նպատակով անհրաժեշտ է կանանց ավելի լայնորեն ներգրավել Պաջը-Ավիաքիմի ակտիվի դասընթացները, ինչպես նաև կազմակերպել կինակտիվի հատուկ դասընթացներ, մասնավորապես գործադրելով շարժական դասընթացներ: Միաժամանակ անհրաժեշտ է հասնել նրան, վոր Պաջը-Ավիաքիմի ակտիվը պատրաստվի արհմիության, լուսբաժնի, կանանց պատգամավորական ժողովներին կից քաղլուսդասընթացների կինկադրերի պատրաստության սիստեմի միջոցով, նրանց ծրագրերի մեջ մտցնելով անհրաժեշտ քանակով ժամեր՝ Պաջը-Ավիաքիմի աշխատանքի համար: Գործնական աշխատանքի ամբողջ սիստեմը (ծանրաբեռնումը, անհատական պատասխանատվությունը, կատարման ստուգումը, հաշվառումը, պարզ առաջադրանքներից ավելի բարդերին անցնելը) պետք է հետապնդի կին ակտիվի վարի խավերի անընդհատ աճեցումը:

11. Աշխատավոր կանանց յերկրի պաշտպանությա-

նը պատրաստության աշխատանքի կենտրոնում մոտակա ժամանակամիջոցում պետք է դնել Պաշը-Ավիաքիմի Համամիութենական 2-րդ համագումարի, ԽՍՀՄ Պաշը-Ավիաքիմի Միության Կենտխորհրդի հուլիսյան պլենումի վորոշումների և Պաշը-Ավիաքիմի հնգամյակի՝ 1931 թվի համար կանանց հետ տարվող աշխատանքի կոնտրոլ թվերի իրացումը: Աշխատանքի կենտրոնում պետք է լինի աշխատանքը ձեռնարկություններում, խորհտնտեսություններում, Մեքենատրակտորային կայաններում, կոլխոզում և ազգությունների մեջ: Անհրաժեշտ է ամենալուրջ ուշադրություն նվիրել բնակչինկոոպներում ([illegible]) տարվող աշխատանքին, մանավանդ սահմանամերձ շերտում:

12. Բացառիկ կարևոր նշանակություն ունի ագիտ-մասսայական աշխատանքի լայն ծավալումն աշխատավոր կանանց մեջ, վորի միութենական խնդիրներն ու բովանդակությունն են՝ մոբիլիզացիայի յենթարկել աշխատավոր կանանց ուշադրությունն ու ակտիվությունը հետևյալ հարցերի շուրջն. իմպերիալիստների կողմից ԽՍՀՄ դեմ զինված հարձակման սպառնալիքի խիստ աճումը, ժամանակակից ռազմական տեխնիկայի զարգացումն ու նրա ազդեցությամբ գալիք պատերազմի բնույթը, բուրժուական կանանց ռազմական կազմակերպությունների աճումը, կուսակցության ու Խորհրդային իշխանության խաղաղության քաղաքականությունը, յերկրի պաշտպանության խնդիրները, յերկրի սոցիալիստական շինարարության, ինդուստրացման, ավիացման ու քիմիացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման նշանակությունը ԲԳԿԲ ռազմատեխնիկական ու մարտական կորովի յերկրի պաշտպանության գործում, Պաշը-Ավիաքիմի դերն ու աշխատանքը, աշխատավոր կանանց խնդիրները յերկրի պաշտպանության պատրաստության բնագավառում:

Այդ աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում աշխատավոր կանանց ինտերնացիոնալ դաստիարակությունը, մանավանդ գյուղում, պարզաբանելով ԽՍՀՄ դերը, վորպես միջազգային պրոլետարիատի հարվածային բրիգադի, և այն խնդիրները, վո-



րոնք այդ առթիվ առաջադրվում են Խորհրդային Միության աշխատավորներին:

Մեծ նշանակություն ունի հասարակական կարգապահության ամրացման և այլ հարցերի շուրջը տարվող դաստիարակչական աշխատանքը:

Աշխատավոր կանանց հետ ագիտ-մասսայական ու դաստիարակչական աշխատանքը պետք է տարվի մեր գործունեյության ամբողջ սիստեմի միջոցով և առաջին հերթին մեր գործնական կազմակերպությունների ցանցի միջոցով (վարժակայաններ, դպրոցներ, խմբեր, դասընթացներ, խմբակներ և այլն), վորոնց աշխատանքի պլաններում այդ նպատակով պետք է հատկացվի վորոշ ժամանակ:

Աշխատավոր կանանց ընկերության մասսայական աշխատանքի ընդհանուր ցանցով ընդգրկման հետ միասին անհրաժեշտ է լայնորեն կիրառել հատուկ զեկուցումներ, զրույցներ, բանվորուհիների, կոլտնտեսուհիների ու բանվորների կանանց ժողովներ կարմիր անկյուններում, ակումբներում, պաշտպանության տներում և այլն: Հարկավոր է կազմակերպել կանանց ռազմական օրեր, հարմարացնելով ըստ ժամանակի Կարմիր բանակի տարեդարձին, մարտի 8-ի օրվան և այլ հեղափոխական տոներին: Այդ բնագավառում հատուկ խնդիրներ ունի մեր Պաշը-Ավիաքիմի մամուլը, վորը պետք է մոտակա ժամանակաշրջանում հատուկ հսկողության տակ վերցնի կանանց հետ տարվող աշխատանքը: Յուրաքանչյուր ռայոնական խմբերին կից անհրաժեշտ է կազմակերպել կին հասարակական ինֆորմատորների ու Պաշը-Ավիաքիմի թղթակիցների խմբակներ:

13. Աշխատավոր կանանց հետ տարվող աշխատանքի հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում նրանց, առաջին հերթին բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին, Պաշը-Ավիաքիմի շարքերը ներգրավելը, վորպեսզի առ 1-ն հունվարի 1933 թվի բարձրացված լինի կազմակերպություններում կանանց թվական կազմը մինչև 35 %-ի: Դրա հետ միասին անհրաժեշտ է կիրառել կազմակերպություններում անդամների ամենօրյա ման-

քաղնին ընտրանք, վճռականապես զտելով կազմակերպությունները դասակարգայնորեն խորթ տարրերից։

14. Առավելագույն չափով ամրացնելու համար յերկրի պաշտպանունակությունը, անհրաժեշտ է ապահովել ընկերության անդամ աշխատավոր կանանց լայն խավերի եվ ավելի մեծ մասնակցությունը սոցիալիստական շինարարությանը, մոբիլիզացիայի յենթարկելով նրանց իրացնելու ընկ. Ստալինի պատմական վեց պայմանները, կռվելու արդֆինպլանների համար, մանավանդ ավիացիոն, քիմիական ու ռազմական արդյունաբերության մեջ ու տրանսպորտում, աջակցելու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանն ու կոլտնտեսությունների կազմակերպչական—տնտեսական ամրացմանը, լոզունգ ունենալով՝ «Պաշը-Ավիաքիմի յուրաքանչյուր անդամ՝ արտադրության հարվածային և արտադրության յուրաքանչյուր հարվածային Պաշը-Ավիաքիմի ակտիվ անդամ», հասնելով այստեղ կոնկրետ արդյունքների, ներգրավել բանվորուհիներին, կոլտնտեսուհիներին սոցմրցակցության ու հարվածայնության մեջ, կազմակերպելով՝ Պաշը-Ավիաքիմի անվան կանանց հարվածային բրիգադներ արտադրություններում, խորհտնտեսություններում, Մեքենատրակտորային կայանում, կոլտնտեսություններում, ներգրավելով կոլտնտեսությունները, տնտեսական-քաղաքական կամպանիաները և կուսակցությունն ու կոմյերիտմիությունը հանձնելով լավագույն ակտիվ հարվածային կանանց։

15. Աշխատավոր կանանց տեխնիկական անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու և սոցշինարարության համար տեխնիկապես վորակյալ կանանց կադրեր պատրաստելու խնդիրը կանանց հետ տարվող աշխատանքի խնդիրներից մեկն է։

Պաշը-Ավիաքիմի կազմակերպության խնդիրն է՝ առանց ստեղծելու տեխնիկական ուսուցման իր հատուկ ցանցը, տեխնիկական լուսավորության համար լայն ագիտ-մասսայական աշխատանք տանելով, ապահովել աշխատավոր կանանց, և առաջին հերթին՝ ընկերության անդամ բանվորուհիների ու կոլտնտեսուհիների առավելագույն ներգրավումը դեպի տեխնիկական այն դասընթացները, վոր պրոֆտեխնիկական պրոպագանդի կարգով կազմակերպվում են արտադրությունում, խորհտնտեսությունում, կոլտնտեսությունում։



Հատուկ նշանակություն ունի աշխատավոր կանանց ներգրավումը դեպի այն դասընթացներն ու խմբակները, վորոնք նպատակ ունեն պատրաստել կադրեր տեխնիկական ու ավիացիոն արդյունաբերության համար, գյուղատնտեսության քիմիացման, քիմիան կենցաղում կիրառելու համար, վոր կազմակերպվում են Պաշը-Ավիաքիմի բջիջների ու խորհուրդների կողմից արտադրությունում, խորհտնտեսությունում, կոլտնտեսությունում։

16. Մինչև այժմ անբավարար է տարվում Կարմիր բանակի կյանքի ու կենցաղի հետ բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին ծանոթացման աշխատանքը։ Անհրաժեշտ է աշխատավոր կանանց ավել մեծ չափով մասնակից դարձնել Կարմիր բանակի զորամասերի վրա յեղած շեֆություններում՝ պրոլետարական ազդեցության, Կարմիր բանակի շինարարության և մարտական կորովի ամրացման աջակցության գծով, գործադրելով զորանոցների, ճամբարների, Կարմիր բանակի տների այցելություններ, կազմակերպելով միատեղ նիստեր, յերեկույթներ և այլն։

17. Աշխատավոր կանանց հետ տարվող ռազմական աշխատանքը նպատակ ունի պատրաստել ռազմականապես վարժ կանանց կադր՝ կատարելու համար թիկունքի պաշտպանության ֆունկցիաներ, Կարմիր բանակում կրելու համար մի շարք մասնագիտական և օժանդակ ծառայություններ, ինչպես նաև անմիջորեն ճակատում մասնակցելու համար մարտական գործողություններին։ Այդ աշխատանքը պետք է տարվի, լայն ընդգրկելով աշխատավոր կանանց և առաջին հերթին բանվորուհիներին, կոմյերիտական ու կոմունիստ կանանց ռազմական ուսուցումով և մանավանդ նրա հետևյալ տեսակներով. հրաձգային պատրաստություն, գնդացրային ու գրահատանկային գործ, տեղագրություն, հետախուզություն և այլն, ինչպես նաև կապն ու ԲԳԿԲ վարչատնտեսական աշխատանքը։

կանանց մեջ տարվող ռազմական աշխատանքի սիստեմում բացառիկ կարևոր նշանակություն է ստանում պատրաստությունը թիկունքի հակաօդային ու քիմիական պաշտպանության համար։

18. Աշխատավոր ազգ.—կանանց մեջ տարվող Պաջր-Ավիաքիմի աշխատանքը խիստ յետ է մնում Ընկերության պրակտիկ գործունեյության ծավալից և ամենևին չի համապատասխանում ազգ.—կանանց ընդհանուր մեծ աճման, սոցիալիստական շինարարության մեջ նրանց ունեցած դերին ու տեղին։

Աշխատավոր ազգ.—կանանց մեջ աշխատանքի ծավալումը պետք է կառուցվի համաձայն աշխատավոր կանանց մեջ Պաջր-Ավիաքիմի տարվող աշխատանքի ընդհանուր խնդիրների, հաշվի առնելով տնտեսական, կուլտուրական-կենցաղային և այլ տարբերությունները և աշխատավոր ազգ.—կանանց տարբեր կատեգորիաների առանձնահատ-կատեգորիաները (բանվորուհիներ, կոլտնտեսուհիներ) և ազգային առանձին ռայոնները։

Աշխատավոր ազգ.—կանանց հետ պաշտպանության մասսայական աշխատանքի համար առավելագույն չափով պետք է օգտագործվեն յեղած խրճիթ-ընթերցարանները, ակումբները, կանանց ակումբները և այլն։ Աշխատավոր ազգ.—կանանց հետ տարվող հաջող աշխատանքի կարևորագույն պայմանը հանդիսանում է այդ աշխատանքի համար հենց իրենցից—ազգ.-կանանցից ղեկավարներ պատրաստելն ու զարգացնելը։

19. Հաշվի առնելով կանանց հետ տարվող աշխատանքի Պաջր-Ավիաքիմի գրականության բացակայությունը և յեղած գրականության անբավարար օգտագործումը, անհրաժեշտ է կիրառել հետևյալ միջոցառումները.

ա) Տեղերում քննարկել ԽՍՀՄ Պաջր-Ավիաքիմի Կենտրոնական Խորհրդի հրատարակչական պլանը, կանանց հետ տարվող աշխատանքի և այլ բաժինների վերաբերյալ, հայտաբերել նոր թեմաներ և Պաջր-Ավիաքիմի ստորին աշխատանքի լավագույն նմուշներ և Պաջր-Ավիաքիմի ակտիվի կողմից ստեղծել բրիգադներ՝



նկարագրելու համար իրենց աշխատանքի փորձը և ուղարկելու համար այդ նյութերը Կենտրոնական Խորհրդի մամուլի բաժնին.

բ) Ազգ.—կանանց հետ տարվող աշխատանքի թեմաները մտցնել ազգային հանրապետությունների ու ազգային մարզերի պետհրատների ռազմական բաժինների հրատարակչական պլանների մեջ.

գ) Մտցնել մի շարք թեմաներ քաղաքացիական պատերազմում կանանց մասնակցության մասին Պետհրատի ռազմա-գեղարվեստական հրատարակչական պլանների մեջ և այդ հրատարակությունների իրագործմանը ներգրավել Լոկաֆին.

դ) ԽՍՀՄ Պաջր-Ավիաքիմի Միության Կենտրոնական Խորհրդի, խմբական խորհրդի կազմի մեջ ջոկել Պաջր-Ավիաքիմի ակտիվ կանանց Մոսկվայի գործարանների հարվածային բանվորուհիներից.

ե) Պաջր-Ավիաքիմի ռայոնական խորհուրդները պետք է կապվեն տեղական ռայոնական գրադարանների հետ և աջակցեն կազմակերպելու համար այդ գրադարաններում Պաջր-Ավիաքիմի խորհրդատու սեղաններ, ջոկելով ռազմական գրքով մասսայական աշխատանքի համար ակտիվ կին անդամներ և հավաքագրելով հարվածային բանվոր ու կոլխոզնիկ ընթերցողներից Ընկերության նոր անդամներ։

զ) Աշխատավոր կանանց հետ տարվող Պաջր-Ավիաքիմի աշխատանքի փորձն ու լավագույն օրինակները լուսաբանել տեղական թերթերում։

20. Հաշվի առնելով Ընկերության ղեկավար աշխատանքի համար աշխատավոր կանանց միանգամայն անբավարար պատրաստությունն ու առաջ քաշումը, անհրաժեշտ է ուժեղացնել ռազմական կադրերի պատրաստությունն ու վերապատրաստությունը Ընկերության գործնական աշխատանքի բոլոր ճյուղերից, վճռականապես կուրս ընդունելով՝ առաջ քաշել լավագույն ակտիվ կանանց ղեկավար աշխատանքի համար, որպես պատասխանատու քարտուղարներ, կինսեկտորների ղեկավարներ, խորհրդի անդամներ, նախագահության անդամներ, կանանց հետ տարվող աշխատանքի

2435

և այլ ճյուղերի, օրինակ՝ հակաոդային պաշտպանության, կազմակերպչական, ագիտմասսայական աշխատանքի հրահանգիչներ և այլն։

21. Նկատի ունենալով գյուղի վրա բանվորական շեֆության խոշոր նշանակությունը, անհրաժեշտ է լայնորեն գործադրել Պաշը—Ակիաքիմի արտադրական կանանց բջիջների շեֆությունը գյուղական բջիջների նկատմամբ հատկապես կանանց հետ տարվող աշխատանքի ծավալման նկատմամբ։

22. Սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունը պետք է լայն գործադրություն ստանան աշխատավոր կանանց հետ տարվող աշխատանքներում (գործնական աշխատանքներին մասնակցության, կարգապահության բարձրացման, աշխատանքի որակի բարելավման վերաբերյալ և այլն կանանց հատուկ բրիգադների կազմակերպում).

23. Ղեկավարել նոր ձևով և աշխատել նոր ձևով,— ահա կանանց հետ տարվող աշխատանքի սեկտորի խընդիրը։

Այդ նշանակում է, որ իր ամբողջ աշխատանքը սեկտորը պետք է կազմակերպի դասակարգային քաղաքական ուղիղ գծի հիման վրա, վճռականապես ու բոլշևիկյան անհաշտությամբ պայքար մղելով օպորտունիզմի դեմ, նեխած— լիբերալիզմի դեմ, լիովին հասցնելով ընկ. Ստալինի պատմական վեց պայմանները, լայնորեն կիրառելով ինքնաքննադատությունը, սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության մեթոդները, առավելագույն չափով ներգրավելով հասարակայնությունը դեպի ղեկավարությունը, պրակտիկ կերպով իրագործելով ստորին կազմակերպությունների կոնկրետ ղեկավարությունը։

Гос. Публ. Библиотека

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ Սրբագրեց՝ Հ. Սառիկյան

Գլավլ. 7557 (բ). Պատվ. 2242. Հրատ. 2278. Տիրաժ 1000.

Հանձնված է արտադրության 5 հուլիսի 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 15 դեկտեմբերի 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0217791

ԳԻՆԸ 50 Կ

40. 466

Военнизация трудящих женщин

Госиздат ССР Армении

Эривань—1932